



I N S U R A N C E



Գույքի և քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության կանոններ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԷՖԵՍ» ԱՓԲԸ խորհրդի կողմից
08.08.2023թ.-ին, արձանագրություն 01

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է
08.08.2023թ.-ից

Կոդ՝ 04.02.01
Խմբագրություն՝ 1.0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	4
ԲԱԺԻՆ 3: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ.....	6
ԲԱԺԻՆ 4: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	11
ԲԱԺԻՆ 5: ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	14
ԲԱԺԻՆ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	14
ԲԱԺԻՆ 7: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ.....	15
ԲԱԺԻՆ 8: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.....	15
ԲԱԺԻՆ 9: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	18
ԲԱԺԻՆ 10: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	21
ԲԱԺԻՆ 11: ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	22
ԲԱԺԻՆ 12: ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ.....	22
ԲԱԺԻՆ 13: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ.....	25
ԲԱԺԻՆ 14: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	27
ԲԱԺԻՆ 15: ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒՔՐՈԳԱՑԻԱ)	27
ԲԱԺԻՆ 16: ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ.....	28
ԲԱԺԻՆ 17: ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	28
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	28
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	36
ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	37
ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳԾՈՒՄ ՀՈՍԱՆՔԻ ԼԱՐՄԱՆ ՏԱՏԱՆՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՋԱՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ	39

ԲԱԺԻՆ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն՝ **Գույքի և Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության կանոնները** (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են գույքային շահերի ապահովագրության պայմանագրի կնքման կարգը, պայմանները, գործողությունը և դադարեցումը՝ կապված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին պատկանող գույքի տնօրինման, օգտագործման և տիրապետման արդյունքում երրորդ անձանց հասցված վնասների՝ քաղաքացիական պատասխանատվության, ինչպես նաև ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերի հետ:
- 1.2. Սույն Կանոնները հանդիսանում են Կանոնների համաձայն կնքված շինությունների, բնակարանների, տնային և այլ գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի/Վկայագրի) անբաժանելի մասը:
- 1.3. Սույն Կանոնների համաձայն «ԷՖԵՍ» ԱԲԲԸ-ն իրականացնում է ապահովագրություն ոչ կյանքի ապահովագրության հետևյալ դասերով՝
 - Ա) Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
 - Բ) Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,
 - Գ) Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն:
- 1.4. Սույն Կանոններին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագրերով **Ապահովագրող** է հանդիսանում «ԷՖԵՍ» ԱԲԲԸ-ն: ՀՀ ԿԲ գրանցման համար՝ 14, տրված 25.07.2023թ.:
- 1.5. Անձը, որը Ապահովագրողի հետ կնքում է ապահովագրության պայմանագիր (Վկայագիր), այսուհետ անվանվում է **Ապահովադիր** :
- 1.6. Սույն կանոնների համաձայն՝ Ապահովադիր կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի սուբյեկտները (գործույնակ ֆիզիկական և իրավաբանական անձինք, պետական մարմիններ, օտարերկրյա պետություններ, և այլն):
Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է հոգուտ գույքի սեփականատիրոջ կամ հոգուտ այլ անձի, ով ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի (այսուհետ՝ **Շահառու**): Անձը, ում օգտին կնքվել է ապահովագրության պայմանագիրը, պետք է ունենա այդ գույքի պահպանման շահագրգռվածություն՝ հիմնված ՀՀ օրենսդրության, այլ իրավական ակտի կամ պայմանագրի վրա:
- 1.7. Սույն Պայմանների հիման վրա կնքած Պայմանագրով/Վկայագրով կարող է ապահովագրվել Ապահովադիր (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվությունն այլ (երրորդ) անձանց (Շահառուների) հանդեպ, ում կյանքին, առողջությանը և/կամ գույքին կարող է պատճառվել վնաս Ապահովադիր (Ապահովագրված անձի) գործողության կամ անգործության արդյունքում:
- 1.8. Սույն Կանոնների համաձայն՝ **ապահովագրության Պայմանագիր (Վկայագիր)** է համարվում Ապահովագրողի և Ապահովադիր միջև համաձայնությունը, ըստ որի Ապահովագրողը Պայմանագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց պայմանագրում նախատեսված պատահարի (ապահովագրական պատահարի) ի հայտ գալու դեպքում ապահովադիր կողմից պայմանագրով սահմանված պայմանների պահպանման դեպքում պարտավորվում է Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում հատուցել այդ պատահարի արդյունքում հասցված իրական կորուստը (վնասը) Ապահովադիրին կամ այլ անձին (Շահառուին):
- 1.9. Սույն Կանոնների համաձայն՝ **իրական վնաս** են համարվում ապահովագրական պատահարի արդյունքում ծագած ծախսերը կամ այն ծախսերը, որոնք անձը, ում իրավունքը խախտվել է, կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքի վերականգման համար՝ կապված գույքի կորստի կամ վնասվածքի հետ:
- 1.10. Եթե ապահովագրության պայմանագիրը կնքված է Շահառուի օգտին, ապա Ապահովագրողն իրավասու է Շահառուից պահանջել ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարում, ներառյալ՝ Շահառուի կողմից ապահովագրական հատուցման պահանջի ներկայացման դեպքում Ապահովադիր վրա դրված, բայց նրա կողմից չկատարված պարտականությունները: Շահառուի այլ իրավունքներն ու պարտականությունները կարող են համաձայնեցվել ապահովագրության պայմանագրում: Ապահովադիրը իրավունք ունի պայմանագրի գործողության ընթացքում փոխելու Շահառուին՝ Ապահովագրողին այդ մասին նախօրոք գրավոր տեղեկացնելով, մինչև Շահառուի՝ պայմանագրով նախատեսված որևէ իրավունքի կատարումը կամ ապահովագրական հատուցման վճարման պահանջի ներկայացումը Ապահովագրողին:
- 1.11. Ապահովագրության պայմանագրի կնքումը Շահառուի օգտին Ապահովադիրին չի ազատում սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կամ Ապահովադիր պարտականությունները կատարվել են անձի կողմից, ում օգտին կնքվել է պայմանագիրը:
- 1.12. Սույն Կանոններում կիրառվող հասկացությունների պարզաբանման բացակայության դեպքում դրանց պարզաբանումը իրականացվում է ՀՀ օրենսդրության նորմերին համապատասխան: ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերում որևէ հասկացության պարզաբանման բացակայության դեպքում տվյալ հասկացության նշանակությունը պարզաբանվում է իր ուղղակի լեզվական նշանակությամբ:

- 1.13. Սույն Կանոններում ներկայացված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ հավելվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կամ պայմանագրի գործողության ընթացքում պայմանով, որ այդպիսի փոփոխությունները չեն հակասում օրենսդրությանը:
- 1.14. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրին տրվում է Կանոնների մեկ օրինակ, ինչի մասին հատուկ նշվում է Պայմանագրում (Վկայագրում), որի դրույթները դառնում են Պայմանագրի (Վկայագրի) անբաժան մասը և պարտադիր են Ապահովագրի և Ապահովագրողի համար, որոնք այսուհետ անվանվում են Կողմեր:

ԲԱԺԻՆ 2: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

- 2.1. Սույն Կանոնների համաձայն՝ ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովագրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված.
- 2.1.1 Ապահովագրված գույքի վնասի, կորստի կամ ոչնչացման ռիսկի հետ,
- 2.1.2 Ապահովագրի (Շահառուի) անկանխատեսելի ծախսերի առաջացման ռիսկի հետ,
- 2.1.3 Երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասը հատուցելու պարտականության հետ (բաղաբացիական պատասխանատվության ապահովագրություն)՝ համաձայն Լրացուցիչ պայմանների:
- 2.2. Ապահովագրության են ընդունվում՝
- 2.2.1. **Բնակարանները**՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքներ, այդ թվում՝ առանձին սենյակներ,
- 2.2.2. **Առանձնատները**՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույց՝ բնակելի նշանակության,
- 2.2.3. **Ոչ բնակելի շենքեր**՝ շենքերի առանձին մասեր կամ կառույցներ, որոնք օգտագործվում են ֆիզիկական անձանց կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ թույլատրվող արտադրության, արհեստագործության, և/կամ այլ անհատական գործունեության համար,
- 2.2.4. **Կառույցներ**՝ բնակելի և ոչ բնակելի առանձին կառույցներ, այդ թվում՝ առանձնատներ, ամառանոցներ, այգետնակներ, ավտոտնակներ, պահեստներ, առևտրային կենտրոններ, հյուրանոցներ, բիզնես կենտրոններ, բազմաբնակարան շենքեր, բաղնիքներ, տնտեսական և այլ կառույցներ ու շինություններ,
- 2.2.5. Ապահովագրողը նաև իրավունք ունի ապահովագրության ընդունել բազմաբնակարան տների՝ դրանց սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույքը, որը չի հանդիսանում բնակարանի (շենքի) մասը և ծառայում է տան 1-ից ավելի շինությունների սպասարկման համար (միջբնակարանային աստիճանահարթակներ, սանդուղքներ, վերելակ, տեխնիկական հարկեր և նկուղներ, տանիք, ցանկապատող կառույցներ, տան կամ շինության տարածքում գտնվող մեխանիկական, էլեկտրական և այլ սարքավորումներ և 1-ից ավելի շինությունների կանաչապատման ծառայող տարրեր, հարմարություններ և այլն),
- 2.2.6. **Հողամասեր**, որոնք պատկանում են Ապահովագրին կամ Շահառուին սեփականության իրավունքով: Հողամասերը որպես ապահովագրության օբյեկտ կարող են ապահովագրվել միայն հողային տարածքների ապահովագրության Լրացուցիչ պայմաններում նշված ռիսկերից, և միայն ի լրումն այդ տարածքների կառույցների ապահովագրությանը:
- 2.2.7. Ապահովագրության ընդունվող գույքը նշվում է ապահովագրության պայմանագրում ապահովագրված գույքի կամ դրա տարրերի (կատեգորիաների) թվարկման տեսքով:
Եթե Պայմանագրում չկան առանձնացված կատեգորիաներ կամ հատուկ նշումներ, ապա ապահովագրության են ընդունվում բնակարանների և կառույցների՝ Կրող կառույցները, հարդարումը և ճարտարագիտական սարքավորումները:
- 2.2.8. Կողմերի համաձայնությամբ գույքը կարող է ապահովագրության ընդունվել առանց դրա ցուցակի կազմման և ապահովագրված յուրաքանչյուր տարրի (գույքի կատեգորիայի) համար հատուցման սահմանափակումների սահմանմանը:
- 2.3. Բնակարաններում, ոչ բնակելի շենքերում և կառույցներում (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում) ապահովագրության են ընդունվում «կրող կառույցներ», «հարդարումը և ճարտարագիտական սարքավորումները», «շարժական գույքը»:
- 2.4. Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա «կրող կառույցներ», «հարդարում և ճարտարագիտական սարքավորումներ», «շարժական գույք» տերմինները հասկացվում են որպես՝
- 2.4.1. **«Կրող կառույցներ»**՝ բնակարաններում՝ պատերը, կրող միջնապատերը և առաստաղը, միջբնակարանային առաստաղերը, բալկոնները, տերրասաները, կառույցներում՝ պատվանդանով հիմքերը, արտաքին և ներքին պատերը և կրող միջնապատերը, առաստաղը (նկուղային, միջհարկային և ձեղնահարկային), ծածկը՝ ներառյալ տանիքը, արտաքին հարդարումը,
- 2.4.2. **«Հարդարում և ճարտարագիտական սարքավորումներ»**.

- 2.4.2.1. **Ներքին հարդարում**՝ ներառյալ տարբեր տեսակի հատակային, որմնային, առաստաղային ծածկույթները, ներկառուցված պահարանները, խոհանոցը՝ ներկառուցված տեխնիկայով, պահարանային սարքավորումներ, բուխարիները, վառարանները, դռները և պատուհանները,
- 2.4.2.2. **Ճարտարագիտական սարքավորումներ**՝ էլեկտրամատակարարման ներքին և արտաքին համակարգերով ճարտարագիտական սարքավորումները (ներառյալ տարբեր տեսակի լուսավորող գործիքները, այդ թվում՝ ջահերը, էլեկտրահաստատման նյութերը և սարքավորումները, էլեկտրակառույցները), ջրմուղին և կոյուղին (ներառյալ սանիտարատեխնիկական գործիքները, բաքերը), ջերմա և գազամատակարարումը (ներառյալ ագրեգատները և գործիքները), օդափոխումը և օդորակումը, աղբատարները, անվտանգության ապահովման առարկաները (դոմֆոններ, պահակային համակարգեր, ներկառուցված սեյֆեր, անվտանգության տեսախցիկներ, և այլն), ներկառուցված կենցաղային տեխնիկա (լվացքի մեքենաներ, գազի վառարաններ, և այլն), գեներատորներ, բոլոր տեսակի պոմպեր, էլեկտրական օբյեկտների ավտոմատացումը ապահովող սարքավորումներ, BMS համակարգ, և այլն,
- 2.4.3. «Շարժական գույք»**
- 2.4.3.1. Փափուկ կահույք, խոհանոցային կահույք (բացառությամբ ներկառուցված տեխնիկայի), միջանցքի, սենյակների կահույք և այլն,
- 2.4.3.2. Առուղի, վիղեռ և էլեկտրոնային տեխնիկա, ֆոտո և կինո սարքավորումներ (հեռուստացույցներ, վիդեո սարքավորումներ, այդ թվում՝ տեսախցիկներ, հեռուստացույցի խաղային ներդիրներ, ծայնարկիչներ, նվագարկիչներ, էլեկտրական ծայնարկիչներ, այդ թվում՝ սկավառակներ, ակուստիկ համակարգեր, այդ թվում՝ սինթեզատորներ, MIDI-համակարգեր, էլեկտրոնային երաժշտական գործիքներ), էլեկտրակենցաղային սարքեր (սառնարաններ, լվացքի մեքենաներ, փոշեկուլներ, ջեռուցող սարքեր, էլեկտրական վառարան, միկրոալիքային վառարաններ, խոհանոցային կոմբայններ, սպասք լվացող մեքենաներ, գազի կաթսաներ, լուսավորող սարքավորումներ, կարի և գործող մեքենաներ, հեռախոս և ֆաքս, անհատական համակարգիչներ և համակարգչային արքեստուարներ) և այլն,
- 2.4.3.3. Ակուստիկ երաժշտական գործիքներ, ծայնա և տեսասկավառակներ, սկավառակներ, օպտիկական սարքեր (հեռադիտակներ և խոշորացույցներ), ժամացույցներ և այլ չափող սարքեր, գորգային և գործվածքային այլ հյուսվածքներ, սպասք, գրադարան, ոչ հնարժեք հագուստ, կոշիկներ, պայուսակներ, պորտֆելներ, դիպլոմատներ, ճամպուրկներ և այլ համանման գույք, հանգստի սպորտային պարագաներ, պոմպային և գազային զենքեր, որսորդական զենքեր, ատաղձագործական, մետաղագործական և այլ տնտեսական ցուցակագրված գույք, ծախսվող նյութեր, ջրավազաններ և այլն,
- 2.4.3.4. Կողմերի համաձայնությամբ այլ շարժական գույք:
- 2.5. Կողմերի հատուկ համաձայնությամբ և առանձին ցուցակի կազմման դեպքում կամ այդպիսի ցուցակ չկազմելու պայման Պայմանագրում ներառելու դեպքում ապահովագրության կարող են ընդունվել հետևյալ շարժական գույքը, որը վերաբերում է «Արժեքավոր գույք» կատեգորիային՝
- ա) թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրեր,
 - բ) նկարներ, կտավներ, քանդակներ, դրոշմանիշերի, մետաղադրամների հավաքածուներ և այլ հավաքածուներ կամ արվեստի գործեր,
 - գ) հատուկ մշակույթային և պատմական արժեք ունեցող հնարժեքներ և այլ շարժական գույքի առարկաներ՝ նշված 2.4.3 կետում:
- Արժեքավոր գույքի նկատմամբ ապահովագրության պայմանագրում կարող է նախատեսվել Արժեքավոր գույքի պահպանման վերաբերյալ Վերապահում: Պահպանման վերաբերյալ Վերապահումը ներառում է արժեքավոր գույքի պահպանման պայմանները և հատուցման սահմանաչափը, որի շրջանակներում իրականացվելու է ապահովագրական հատուցման վճարումը՝ պահպանման Վերապահումը չկատարելու դեպքում:
- 2.6. Ապահովագրության կարող են ընդունվել բնակարաններում և կառույցներում առկա բնապատկերային նախագծի տարրերը, եթե այդպիսիք նշված են ապահովագրության պայմանագրում:
- 2.7. Ապահովագրությունը չի տարածվում հետևյալ շարժական գույքի վրա՝
- ա) ՀՀ դրամով կամ արտարժույթով կանխիկ փողի,
 - բ) բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի,
 - գ) ծեռագրերի, պլանների, գծագրերի և այլ փաստաթղթերի, հաշվապահական և գործնական փաստաթղթերի, կտրոնների, կուպոնների, վառելիքի չեկերի, վճարային չեկերի, փաստաթղթերի,
 - դ) թանկարժեք մետաղների՝ ձուլակտորներով և թանկարժեք քարերի՝ առանց շրջանակների,
 - ե) դյուրավառ և պայթուցիկ նյութերի,
 - զ) ապահովագրված շենքում գտնվող, բայց Ապահովագրին կամ Շահառուին չպատկանող գույքի (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով),
 - է) սննդամթերքի, խմիչքի և ծխախոտային արտադրանքի,
 - ը) տնային և գյուղատնտեսական կենդանիների,

թ) տարածքի բարելավման պլանավորման հետ կապված աշխատանքների (տարածքում օբյեկտների տեղաբաշխման նախագծի կազմում, ծաղկանոցների պլանավորում և այլն),

ժ) գույքը, որը գտնվում է բնակության համար ոչ պիտանի, խարխուլ տարածքներում, վթարային վիճակում գտնվող, կապիտալ վերանորոգման կարիք ունեցող կամ քանդման ենթակա շենքերում, շինմոնտաժային աշխատանքների իրականացման փուլում գտնվող շինություններում,

2.8. Ապահովագրության չեն ընդունվում հետևյալ անշարժ գույքերը.

ա) Փայտից տները և շինությունները, ինչպես նաև դրանցում գտնվող գույքը,

բ) Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնցում իրականացվում է կապիտալ վերանորոգում կամ որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք,

գ) Բնակարանները՝ տեղակայված բազմաբնակարանային տներում, որոնք ներառված են տարաբնակեցման պլաններում,

Խարխուլ շինությունները, որոնց ֆիզիկական մաշվածությունը կազմում է 75 և ավելի տոկոս,

դ) Վթարային վիճակում գտնվող կամ քանդման ենթակա շենքերում գտնվող բնակարանները,

ե) Սողանքային գոտիներում գտնվող բազմաբնակարանային տներ կամ առանձնատներ,

զ) օբյեկտները, որոնք պետական մարմինների կարգադրությամբ ենթակա են առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրանց վրա արգելանք դնելու, վնասման կամ ոչնչացման:

ԲԱԺԻՆ 3: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

3.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրական ռիսկ է հանդիսանում ենթադրվող իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը:

Ապահովագրական պատահար է համարվում սույն Կանոններում և ապահովագրության պայմանագրով նախատեսված 3.2.1 - 3.2.13, 3.5 և 3.9 կետերում նշված տեղի ունեցած իրադարձությունները, որոնք բերում են ապահովագրված գույքի վնասվածքի, կորստի (ոչնչացման) հետ կապված, ինչպես նաև լրացուցիչ ծախսերի (բաց թողնված օգուտների) հետևանքով առաջացած վնասի պատճառմանը, և Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականության կատարմանը:

Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել ներքոնշյալ պատահարներից յուրաքանչյուրի ամբողջությամբ կամ առանձին համակցություններով ի հայտ գալու դեպքում:

Ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում կողմերը իրավասու են պայմանավորվել Ապահովագրողի՝ Կանոնների 3.2.1 - 3.2.13, 3.5 և 3.9 կետերում նշված պատահարներից յուրաքանչյուրի կամ մի քանիսի պատասխանատվության նվազեցման վերաբերյալ:

3.2. Սույն Կանոնների համաձայն՝ Ապահովագրողը ապահովագրական պաշտպանվածություն է ապահովում ապահովագրված գույքի վնասվածքից կամ կորստից (ոչնչացումից), որը հետևանք է՝

3.2.1. «Հրդեհ» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) կրակի ծագման արդյունքում, այդ թվում հարևան տարածքներում և Ապահովագրին (Շահառուին) չպատկանող տարածքներում առաջացած, որը կարող է ինքնուրույնաբար տարածվել դրա ծագման և տարածման համար հատուկ չնախատեսված վայրերում, ինչպես նաև կարող է ունենալ գույքի վրա ազդեցություն այդ կրակի, վառվող սուբստանցիաների (ծխի և այլն), բարձր ջերմաստիճանի հետևանքով կամ հրդեհը հանգցնելուն ուղղված օրինական գործողությունների, այդ թվում՝ հրդեհամարման ավտոմատ համակարգերի օգտագործման արդյունքում:

Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում ծագած հրդեհի հետևանքով գույքին հասցված վնասը չի վերաբերվում «Հրդեհ» ռիսկին, այլ հատուցվում է «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ» ռիսկի ներքո:

Ջրի կամ հրդեհաշիջման համար այլ հեղուկների հետևանքով (ներառյալ հակահրդեհային համակարգից դուրս եկող ջրի) գույքին պատճառված վնասը չի վերաբերվում «Հրդեհ» ռիսկին, այլ հատուցվում է «Վնասվածք Ջրից» ռիսկի ներքո:

Կայծակի հարվածից առաջացած հրդեհի հետևանքով գույքին պատճառված վնասը չի վերաբերվում «Հրդեհ» ռիսկին, այլ հատուցվում է «Տարերային աղետներ» ռիսկի ներքո:

Հրդեհից ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չեն համարվում՝

Ա) Էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, կարճ միացման արդյունքում ապահովագրված գույքին պատճառված վնասները՝ անկախ դրա առաջացման պատճառներից, եթե վերոնշյալ դեպքերը տեղի չեն ունեցել հրդեհի հետևանքով (սույն վնասները հատուցվում են բացառապես համաձայն «Կարճ միացում» ռիսկի):

Բ) Վնասը, կորուստը (ոչնչացումը), որոնք արդյունք են ապահովագրված գույքը կրակով, ջերմությամբ կամ այլ ջերմային ազդեցությամբ մշակման, որի նպատակն է գույքի վերամշակումը կամ այլ նպատակներով օգտագործումը (օրինակ՝ չորացման, եփում, արդուկման, ապխտման, տապակման, տաքությամբ վերամշակման և այլնի համար):

Գ) Վնասը, որը առաջացել է «Մեխանիկական վնասներ» ռիսկում նկարագրված իրադարձությունների հետևանքով առաջացած հրդեհի արդյունքում

3.2.2. «Պայթյուն» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է կենցաղային կամ արտադրական նպատակներով օգտագործվող գազի կամ պայթյունիկ նյութերի պահպանման, տեղափոխման կամ վերամշակման (օգտագործման) համար օգտագործվող գազատարների, կաթսաների և այլ տարողությունների կամ մեխանիզմների պայթյունի:

Երրորդ անձանց հակաօրինական գործողությունների արդյունքում ծագած հրդեհի հետևանքով գույքին հասցված վնասը չի վերաբերվում «Պայթյուն» ռիսկին, այլ հատուցվում է «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ» ռիսկի ներքո:

Գույքի ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար չեն համարվում իրադարձությունները, որոնք առաջացել են Ապահովադրի, նրա ընտանիքի անդամների կամ համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից պայթյունիկ նյութերի անօրինական պահպանման կամ պատրաստման արդյունքում:

Ջեռուցման կաթսաների պայթյունը, որի հետևանքով ապահովագրված այլ գույքը չի կրել վնաս, ենթակա չէ հատուցման: Սույն կետով նախատեսված վնասը հնարավոր է ապահովագրել համաձայն Լրացուցիչ պայմանների «Ճարտարագիտական համակարգերի» խափանման հետևանքով առաջացած վնասներ ռիսկի:

3.2.3. «Վնասվածք ջրից» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է դրա վրա ջրի կամ ապահովագրության տարածքում գտնվող ջրմուղային, կոյուղային, ջեռուցման, սառեցնող կամ օդափոխող համակարգերից այլ հեղուկների ներգործության (ներառյալ այդ համակարգերի վերանորոգման ժամանակ պատճառված վնասները), կամ Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան շինություններից (ներառյալ չբնակեցված տարածքներ) ջրի կամ այլ հեղուկների ներգործության արդյունքում, ինչպես նաև հրդեհաշիջման համար նախատեսված հեղուկների (ներառյալ հակահրդեհային համակարգի) հետևանքով գույքին հասցված վնասը:

Ծածկից, դռներից և պատուհանների՝ 3.2 կետում նշված այլ ռիսկերի (Տարերային աղետներ, պայթյուն, հրդեհ, և այլն) հետևանքով առաջացած վնասների արդյունքում ներթափանցած ջրի կամ այլ հեղուկների հետևանքով պատճառված վնասները չեն վերաբերվում «Վնասվածք ջրից» ռիսկին, այլ հատուցվում է համապատասխան ռիսկերի ներքո:

Ապահովագրական պատահար չեն համարվում իրադարձությունները, որոնք առաջացել են՝

Ա) Մթնոլորտային տեղումների արդյունքում պատճառված վնասները կամ կորուստը, անկախ դրանց ներթափանցման վայրից,

Բ) Սառնարանի ապաստանման հետևանքով առաջացած հեղուկի, ինչպես նաև ակվարիումի վնասի և ջրատար, կոյուղու, ջեռուցման, սառեցման և օդափոխանակման համակարգերի ֆունկցիոնալ մաս չհանդիսացող այլ հեղուկների հետևանքով առաջացած գույքի վնասը կամ կորուստը (ոչնչացումը),

Գ) Ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգերի, ջրատար արտաքին և ներքին ցանցերի, կոյուղու ցրտահարումից, ապաստանցումից գույքին, այդ թվում Ճարտարագիտական Սարքավորումներին պատճառված վնասը (սույն ռիսկը հնարավոր է ներառել համաձայն Լրացուցիչ պայմանների «Ճարտարագիտական համակարգերի» խափանման հետևանքով առաջացած վնասներ ռիսկի),

Դ) Վնասը, որը պատճառվել է Ճարտարագիտական համակարգերին՝ առանց այլ ապահովագրված գույքին վնաս պատճառելու (սույն ռիսկը հնարավոր է ներառել համաձայն Լրացուցիչ պայմանների «Ճարտարագիտական համակարգերի» խափանման հետևանքով առաջացած վնասներ ռիսկի),

Ե) Ճարտարագիտական համակարգերի օգտագործման հետ կապված ջրի կամ այլ հեղուկի (այդ թվում՝ գոլորշի) ազդեցության հետևանքով գույքին հասցված վնասները (փտում, բորբոս սունկ, կոռոզիա, էռոզիա, և այլն), բացառությամբ դեպքերի, երբ տվյալ վնասը առաջացել է «Վնասվածք ջրից» ռիսկի հետևանքով:

Զ) Մեխանիկական վնասների հետևանքով առաջացած վնասների արդյունքում ներթափանցած ջրի կամ այլ հեղուկների հետևանքով պատճառված վնասները:

3.2.4. «Մեխանիկական վնասներ» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է.

Ա) ցամաքային կամ ջրային տրանսպորտային միջոցների բախման հետևանքով,

Բ) օբյեկտների կամ դրանց մասերի (ներառյալ ավտոմեքենաների անիվների տակից թռչող քարերի և այլ պինդ առարկաների), բեռների կամ այլ առարկաների վայր ընկման, բախման կամ անկման հետևանքով, ինչպես նաև այդ առարկաների անկման ժամանակ առաջացած օդային հարվածող ալիքների, բառառությամբ ապահովագրված տարածքներում տեղադրված իրերի անկումից,

Գ) սյուների, ծառերի, լուսամփոփների, լուսացույցների, շինարարական կոունկների և այլ շինարարական մեխանիզմների, շինությունների մասերի և այլ նմանատիպ առարկաների անկման կամ բախման հետևանքով, այդ թվում Ապահովադրին (Շահառուին) պատկանող հողամասում տեղադրված, բացառությամբ ապահովագրված տարածքների ներսում տեղադրվածների,

Դ) աստրոնոմիական օբյեկտների անկման (մետեորիտներ, աստերոիդներ, քարեր, և այլն), օդաչուով կամ անօդաչու թռչող սարքերի (այդ թվում ինքնաթիռներ, տիեզերանավեր) կամ դրանց մասերի, բեռների կամ այդ օբյեկտների վրայից այլ առարկաների անկման, ինչպես նաև այդ առարկաների անկման ժամանակ առաջացած օդային հարվածող ալիքների հետևանքով,

Ե) Ապահովադրին (Շահառուին) պատկանող տարածքներից դուրս, այդ թվում Ապահովադրին (Շահառուին) չպատկանող հարևան շինություններում երրորդ անձանձ կողմից կատարվող վերանորոգման, շինարարական աշխատանքների կամ վերակառուցման (վերապլանավորումներ, վերասարքավորումներ) անցկացման, բազմաբնակարան տների կամ կառույցների վրա, որտեղ գտնվում է ապահովագրության օբյեկտը, երրորդ անձանց կողմից շինարարական աշխատանքների կատարման հետևանքով,

Երրորդ անձանց դիտավորյալ հակաօրինական գործողությունների արդյունքում վերոնշյալ ռիսկերի առաջացման հետևանքով հասցված վնասը չի վերաբերվում «Մեխանիկական վնասներ» ռիսկին, այլ հատուցվում է «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ» ռիսկի ներքո:

«Մեխանիկական վնասներ» ռիսկի ներքո չեն հանդիսանում ապահովագրական պատահարներ այն ռիսկերը, որոնք առաջացել են սույն Կանոնների 3.2.9 և 3.2.13 կետերով նախատեսված պատահարների հետևանքով:

3.2.5. «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ».

3.2.5.1. «Գողություն» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է երրորդ անձանց հետևյալ անօրինական գործողությունների արդյունքում (ներառյալ դրանց փորձի).

Ա) Ներխուժում տարածք՝ դռները, պատուհանները կամ դրանց ծածկերը (ճաղավանդակներ, փեղկեր, և այլն) ջարդելու, ստեղծելու, կրկնօրինակված բանալիներ կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործելու միջոցով: Կրկնօրինակված են համարվում այն բանալիները, որոնք պատրաստվել են այնպիսի անձանց հանձնարարությամբ կամ համաձայնությամբ, կամ պատրաստվել են հենց իրենց կողմից, ովքեր չունեն օրինական բանալիների օգտագործման իրավունք: Ընդ որում, գույքի անհայտացումը չի ենթադրում կրկնօրինակված բանալիների օգտագործում: Ստեղծելու, կեղծ բանալիների և այլ տեխնիկական միջոցների կիրառումը հաստատվում է Ոստիկանության կամ այլ իրավասու մարմինների կողմից կատարված փորձաքննությամբ՝ կատարված հետաքննության կամ նախաքննության ժամանակ,

Բ) Կողպված տարածքներից առարկաների հափշտակում, որտեղ հանցագործը ավելի վաղ ներխուժել էր օրինական ճանապարհով, և այնտեղ թաքնվել էր մինչև տարածքի կողպվելը,

Գ) հողամասերից այնպիսի առարկաների հափշտակում, որոնք կցված չեն անշարժ գույքին կամ չեն գտնվում կողպված փակ տարաքում,

Դ) առարկաների պահատույ/պահախուց (սեյֆեր, բունկերներ, և այլն) հանդիսացող գույքի ջարդում, կամ դրանց բացում սեղմներով, կրկնօրինակված բանալիներով կամ այլ գործիքներով, պայմանով, որ տարածք են ներխուժել սույն կետի «Ա» և «Բ» կետում նկարագրված եղանակներով:

3.2.5.2. «Կողոպուտ, ավազակություն» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է երրորդ անձանց այնպիսի անօրինական գործողությունների արդյունքում, որոնց ՀՀ Քրեական Օրենսգրքով դասվում են, որպես «Կողոպուտ» կամ «ավազակություն» (ներառյալ դրանց կատարման փորձը):

3.2.5.3. «Դիտավորյալ գործողություններ» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որը հետևանք է.

Ա) երրորդ անձանց կողմից դիտավորյալ գործողությունների՝ միտված գույքի դիտավորյալ ոչնչացման կամ վնասման, այդ թվում՝ այրելու, պայթեցնելու կամ այլ հանրավտանգ ճանապարհներով, կամ էլ նշվածների իրագործման փորձերի,

Բ) Վանդալիզմի,

Գ) Խուլիգանության,

Դ) Զանգվածային անկարգության:

Վերոնշյալ ա, բ և գ կետերով նախատեսված ռիսկերը մեկնաբանվում են՝ համաձայն ՀՀ Քրեական Օրենսգրքի:

3.2.5.4. «Երրորդ անձանց կողմից վնաս» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն առաջացել է երրորդ անձանց անուշադիր գործողությունների արդյունքում:

3.2.5.4 կետով սահմանված «Երրորդ անձանց կողմից վնաս» ռիսկի ներքո չեն հատուցվում գույքին հասցված վնասները, պակասուրդը, գողությունը կամ կորուստը, որոնք արդյունք են այնպիսի անձանց գործողությունների, ովքեր համատեղ բնակվում են Ապահովադրի (Շահառուի) հետ, վերջինիս հետ վարում են համատեղ տնտեսություն, կամ վարձատու են (գործատուներ, պարտապաններ, լիզինգատուներ) և/կամ այլ անձինք, ովքեր Ապահովադրի (Շահառուի) հետ համատեղ օգտագործում են ապահովագրված գույքը, ինչպես նաև անձինք, ովքեր ապահովագրական տարածքում գտնվում են Ապահովադրի (Շահառուի) համաձայնությամբ, կամ հանդիսանում են վերոնշյալ նկարագրված անձանց աշխատակիցները:

Սույն Կանոնների կիրառմամբ վերոնշյալ անձանց աշխատակից են համարվում անձինք, ովքեր վերոնշյալ անձանցից որևէ մեկի հանձնարարությամբ իրականացնում են աշխատանք՝ ուղղակիորեն կապված Պայմանագրում նշված ապահովագրական տարածքում գտնվելու հետ (տնային աշխատողներ, դայակներ, հավաքարարներ, անվտանգության աշխատակիցներ, շինարարներ, և այլն):

3.2.5.5. Պայմանագրում կարող է նախատեսվել պայման՝ Ապահովադրին (Շահառուին) պատկանող ապահովագրված տարածքներում դռների և/կամ գույքի պահոցների (օրինակ՝ սեյֆեր) նոր կողպեքների տեղադրման կամ կողպեքների ներքին մասերի փոխարինման (եթե այն տեխնիկապես հնարավոր է) ծախսերի հատուցման համար,

որոնք հետևանք են «Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ» դիսկի առաջացման արդյունքում՝ այդպիսի ապահովագրված տարածքի բանալիների կորստի տեսքով:

3.2.6. «**Տարերային աղետներ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է.

Ա) երկրաշարժի, ուժեղ քամու, հողմի, դարավուլի (քարաթափում), փոթորիկի, փոթորկանքի, ցիկլոնի, մրրիկի, մրրկասյան, կաթնալի հարվածի, պտտահողմի, հողմապտույտի, հրաբխի ժայթքման կամ ստորգետնյա բնական կրակի ներգործության, սողանքի, կամ լեռնային փլուզման, սելավի, ջնահյուսի,

Բ) ջրհեղեղի, հեղեղի, գետավարարի, ջրակայման, հորդացման, ջրածածկման, կամ այլ ջրային ռեժիմների, պայմանով, որ այդպիսի ջրային ռեժիմի փաստը հաստատված է իրավասու մարմինների կողմից (ԱԻՆ կամ այլ իրավասու մարմիններ),

Գ) Կարկուտի՝ պայմանով, որ դրա տեղի ունենալը հաստատված է ԱԻՆ, Հիդրոմետ Ծառայության կամ այլ իրավասու մարմնի կողմից,

Դ) այլ բնական երևույթներ, այդ թվում՝ մթնոլորտային տեղումների (կարկուտ, տեղատարափ անձրև, ձյուն), եթե դրանք Ազգային օդերևութաբանական ծառայության մարմնի կամ ԱԻՆ կողմից ճանաչվել են որպես վտանգավոր բնական երևույթներ կամ արտակարգ դեպքեր (այդ թվում տվյալ տեղանքի համար անոմալ մթնոլորտային տեղումներ՝ սելավ, ձյուն, և այլն):

Տարերային աղետներից ապահովագրության ժամանակ **ապահովագրական պատահար չեն համարվում** գույքի վնասվածքը կամ կորուստը (ոչնչացումը), որոնք առաջացել են 3.2.6 կետի «Ա», «Բ» և «Գ» ենթակետերում չնկարագրված դեպքերի հետևանքով, կամ դրանք Ազգային օդերևութաբանական ծառայության մարմնի կամ ԱԻՆ կողմից չեն ճանաչվել որպես վտանգավոր բնական երևույթներ կամ արտակարգ դեպքեր:

3.2.7. «**Ահաբեկչություն**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որն արդյունք է երրորդ անձանց կողմից կատարված այնպիսի գործողությունների, որոնք ՀՀ Քրեական օրենսգրքով կամ այլ իրավական ակտերով բնութագրվում են, որպես «Ահաբեկչություն» կամ «Ահաբեկչական գործողություն»:

«Ահաբեկչություն» դիսկի ներքո չեն հատուցվում գույքի վնասվածքը կամ կորուստը (ոչնչացումը), որը հետևանք է երրորդ անձանց կողմից քիմիական կամ կենսաբանական զենքի կիրառման:

3.2.8. «**Կարճ միացում**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) կրակի ծագման արդյունքում (բաց կրակ), որը կարող է ինքնուրույնաբար տարածվել դրա ծագման և տարածման համար հատուկ չնախատեսված վայրերում, ինչպես նաև կարող է ունենալ գույքի վրա ազդեցություն այդ կրակի, վառվող ապրանքների (ծխի, մոխրի և այլն), բարձր ջերմաստիճանի, եթե դրանք տեղի են ունեցել էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման կամ կարճ միացման արդյունքում:

«Կարճ միացում» դիսկի ներքո չեն հատուցվում գույքի վնասվածքը կամ կորուստը (ոչնչացումը), որը հետևանք է.

Ա) էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման կամ կարճ միացման, անկախ դրանց առաջացման պատճառներից, եթե չեն առաջացրել հրդեհի (կրակ)(այդ դիպքը կարող է ապահովագրվել համաձայն «էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման Լրացուցիչ Պայմանների»):

Բ) հոսանքակիր լարերի մերկ մասերի պատահական հպման հետևանքով առաջացած կարճ միացումը, եթե լարերը թողնվել են ակնհայտ անխնամ վիճակում, կամ մոնտաժված են եղել ՀՀ ԱԻՆ հրդեհային անվտանգության նորմատիվների խախտումներով:

3.2.9. «**Հավելյալ պաշտպանություն**».

3.2.9.1. «**Ռիսկերի 1-ին խումբ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որոնք հետևանք են.

Ա) Մթնոլորտային տեղումների ազդեցության՝ անկախ դրանց ներթափանցման տեղերից,

Բ) Ձյան ճնշման կամ ծածկից սահքի (այդ թվում հարևան շինությունների ծածկերից):

3.2.9.2. «**Ռիսկերի 2-րդ խումբ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) սույն Կանոններով և Պայմանագրով նախատեսված դեպքերի հետևանքով, որոնք առաջացել են Ապահովադրի (Շահառուի), նրա ընտանիքի անդամների կամ Ապահովադրի (Շահառուի) հետ համաձայնությամբ գործող անձանց կողմից ՀՀ Օրենսդրությամբ կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հակահրդեհային անվտանգության նորմերի և կանոնների, ջրատար, կոյուղային, ջեռուցման և հակահրդեհային համակարգերի օգտագործման կանոնների, տարածքների օգտագործման և/կամ պահմանման, գույքի պահպանման և օգտագործման ինստրուկցիաների խախտման կամ չկատարման արդյունքում:

3.2.9.3. «**Ռիսկերի 3-րդ խումբ**» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) սույն Կանոնների 3.2.1 – 3.2.3, 3.2.8 կետերով նախատեսված դեպքերի հետևանքով, որոնք տեղի են ունեցել գույքի օգտագործման նորմատիվային ժամկետների, շին-մոնտաժային աշխատանքների իրականացման նորմերի և կանոնների խախտման, գույքի օբյեկտների և դրանց առանձին մասերի արտադրական, ոչ արտադրական, շինարարական թերությունների, շինարարության ժամանակ օգտագործված նյութերի թերությունների, նախագծման և ապահովագրական տարածքում շինարարական սխալների պատճառով:

Սույն դիսկով հատուցվում են միայն այն վնասները, որոնք առաջացել են վերոնշյալի արդյունքում տեղի ունեցած և Կանոնների 3.2.1-3.2.3, 3.2.8 կետերով սահմանված պատահարների, այսինքն՝ հրդեհի, պայթյունի, ջրից

վնասվածքների և կարճ միացման հետևանքով: Վնասը, որը առաջացել է կառուցվածքային կամ այլ թերությունների հետևանքով, որոնք նկարագրված են 3.2.9.3 կետում, և ուղղակի կապված չէ այդ թերություններին հետևող հրդեհի, պայթյունի, ջրից վնասվածքների և կարճ միացման հետ, կարող է հատուցվել միայն սույն Կանոնների 3.2.9.3 կետի ռիսկերով՝ «Կոնստրուկտիվ թերություններ»:

3.2.9.4. «Ապակե առարկաների կոտրանք» - ապակե կամ այլ հեշտ կոտրվող առարկաների կորուստ (ոչնչացում) (այդ թվում լուսամուտներ, դռներ, ցուցափեղկեր, վիտրաժներ, հայելիներ, լուսավորող սարքերի ծածկեր, օրգանական ապակուց առարկաներ, սալիկներ, ֆայաս և այլ կոտրվող նյութեր, ներառյալ սանտեխնիկական հանգույցներ, բացառությամբ սարքավորումների, էլեկտրոնային և բջջային տեխնիկայի, ակնոցների և օպտիկական սարքերի) դրանց պատահական կոտրանքի հետևանքով:

Սույն ռիսկով չի հատուցվում գույքի վնասը, կորուստը կամ ոչնչացումը, որը հետևանք է.

Ա) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի մակերեսային վնասման (օրինակ՝ խազեր, մթազնում, ճաքեր, խամրածություն),

Բ) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի պատահական կամ դիտավորյալ ներկման

Գ) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի տեղափոխման (այդ թվում՝ տրանսպորտային),

Դ) Ներքին կամ արտաքին ճնշման, այդ թվում այլ առարկաների կողմից,

Ե) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի իրենց մշտական տեղադրված վայրից հեռացման կամ ապամոնտաժման,

Զ) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի ապաստառեցման կամ հալեցման տաքացնող սարքերով (զոդման լամպ, այրիչներ, կվարցային լամպ, և այլն), ինչպես նաև տաք ջրի կամ այլ հեղուկների միջոցով,

Է) Ապակե կամ այլ հեշտ կոտրվող իրերի վրա կործանարար ազդեցություն տաքացնող սարքերի, պլիտաների կամ գովազդային վահանակների կողմից,

Ը) իրադարձություններ, որոնք նկարագրված են սույն Կանոնների 3.2.9 և 3.2.13 կետերով:

3.2.10. «Կենդանիների գործողություններ» - գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) այնպիսի կենդանիների գործողությունների արդյունքում, ինչպիսիք են. կաթնասուններ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ, որոնք չեն պատկանում Ապահովադրին (Շահառուին), նրա ընտանիքի անդամներին, նրա հետ համատեղ բնակվող և տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցներին կամ նրա վստահված անձանց (այդ թվում վարձակալներ): Կենդանիների գործողությունները չպիտի առաջացած լինեն (այդ թվում սաղարանքի միջոցով) Ապահովադրի (Շահառուի), նրա ընտանիքի անդամների, նրա հետ համատեղ բնակվող անձանց, տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցների կամ նրա վստահված անձանց (այդ թվում վարձակալի) կողմից:

Սույն կետով թվարկված կենդանիների խմբերը ամբողջական են և փակ, այսինքն կենդանիների այլ խմբերի՝ օրինակ կրծողների, միջատների կողմից գույքին հասցված վնասը չի համարվի ապահովագրական պատահար:

3.2.11. Պայմանագրով կարող է նախատեսվել նաև Ապահովադրին (Շահառուին), նրա ընտանիքի անդամներին, նրա հետ համատեղ բնակվող անձանց, տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցներին կամ նրա վստահված անձանց (այդ թվում վարձակալներ) պատկանող կենդանիների (կաթնասուններ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ) գործողությունների հետևանքով գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում), որոնք չեն առաջացել (այդ թվում սաղարանքի միջոցով) Ապահովադրի (Շահառուի), նրա ընտանիքի անդամների, նրա հետ համատեղ բնակվող անձանց, տնտեսություն վարող անձանց, Ապահովադրի (Ապահովագրված անձի) աշխատակիցների կամ նրա վստահված անձանց (այդ թվում վարձակալի) կողմից:

3.2.12. «Տեխնածին վթար» - ապահովագրված գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) դրա վրա արդյունաբերական կամ գյուղատնտեսական կազմակերպությունների ջրերի և/կամ թափոնների ազդեցության, վտանգավոր նյութերի արտանետման, ջրամբարից ջրի բացթողման և այլ իրադարձությունների հետևանքով, որոնք առաջացել են ապահովագրված տարածքից դուրս վտանգավոր օբյեկտներում վթարների արդյունքում (այդ թվում վերամշակման, ջրառների, և այլ):

3.2.13. «Կոնստրուկտիվ թերություններ» - ապահովագրված գույքի վնասվածք կամ կորուստ (ոչնչացում) գույքի օգտագործման նորմատիվային ժամկետների խախտման, շինարարական թերությունների, գույքի օբյեկտների և դրանց մասերի թերի լինելու հետևանքով, շինարարության ժամանակ օգտագործված թերի նյութերի, նախագծման և շինարարության թերությունների հետևանքով:

«Կոնստրուկտիվ թերություններ» ռիսկով հատուցման ենթակա չեն.

Ա) գույքին հասցված վնաս, որը առաջացել է հատակի ծածկի, պատերի ծածկի, առաստաղի ծածկի, ինժեներական կոմունիկացիաների և այլնի վնասի, եթե այն չի առաջացել «Կոնստրուկտիվ թերություններ» ռիսկով նախատեսված հանգամանքների արդյունքում կոնստրուկտիվ հարմարանքների շարժման և/կամ դեֆորմացիայի հետևանքով,

Բ) գույքին հասցված վնաս, որն առաջացել է կոսմետիկ թերությունների հետևանքով (ճաքեր, հատակի, պատերի, առաստաղների և այլն ծածկերի շերտազատում, մթազնում, բորբոս, սունկ, խոնավություն և այլն), ինչպես նաև ապակիների ապահերմետիկացման արդյունքում (ինչպես կոնստրուկտիվ թերությունների, այնպես էլ այլ հանգամանքների պատճառով):

- Գ) 3.2.1-3.2.9, 3.2.10, 3.2.12 կետերում նշված պատահարների արդյունքում գույքին հասցված վնասը¹:
- 3.3. Այն դեպքում, երբ Ապահովագրողն ապահովագրական ծածկույթ է տրամադրում սույն Կանոնների 3.2.1 - 3.2.13 կետերում նշված ռիսկերից մեկի կամ մի քանիսի գծով, ապա ապահովագրության պայմանագրի «Ապահովագրական ռիսկեր» բաժնում նշվում են համապատասխան ռիսկերը (ռիսկերի անվանումները) կամ Կանոնների կետերը:
- 3.3.1. Եթե Ապահովագրողը տրամադրում է ծածկույթ սույն Կանոնների 3.2.1-3.2.6, 3.2.8 կետերում նշված բոլոր ռիսկերից, ապա ապահովագրության պայմանագրի «Ապահովագրական ռիսկեր» բաժնում կարող են նաև նշվել «**Ռիսկերի Ստանդարտ փաթեթ**» տերմինը:
- 3.3.2. Եթե Ապահովագրողը տրամադրում է ծածկույթ սույն Կանոնների 3.2.1-3.2.6, 3.2.8, 3.2.9.4, 3.2.10 կետերում նշված բոլոր ռիսկերից, ապա ապահովագրության պայմանագրի «Ապահովագրական ռիսկեր (Իրադարձություններ)» բաժնում կարող են նաև նշվել «**Ռիսկերի Դասական փաթեթ**» տերմինը:
- 3.3.3. Եթե Ապահովագրողը տրամադրում է ծածկույթ սույն Կանոնների 3.2.1- 3.2.8, 3.2.9.1, 3.2.9.4, 3.2.10. կետերում նշված բոլոր ռիսկերից, ապա ապահովագրության պայմանագրի «Ապահովագրական ռիսկեր» բաժնում կարող են նաև նշվել «**Ռիսկերի Ամբողջական փաթեթ**» տերմինը:
- 3.4. Եթե Պայմանագրով նախատեսված չի 3.2.1 – 3.2.13 կետերով նշված որևէ ռիսկ, ապա այդ ռիսկի հետևանքով գույքին հասցված վնասը կամ կորուստը (ոչնչացումը) ենթակա չի հատուցման:
- 3.5. Կողմերի հատուկ համաձայնությամբ ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական ծածկույթ սույն Կանոնների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետ կապված լրացուցիչ ծախսերի ռիսկից, ինչպես նաև սույն Կանոնների Լրացուցիչ պայմաններով նախատեսված այլ ռիսկերից:
- 3.6. Սույն Կանոնների համաձայն ապահովագրական պատահար չեն համարվում՝
- ա) ինքնաարյման, խմորման, փտման կամ ապահովագրված առարկաների այլ բնական հատկանիշների արդյունքում գույքի վնասվածքը կամ կորուստը (ոչնչացումը),
 - բ) կառույցների կամ դրանց մասերի փլուզումը, որը պայմանավորված չէ ապահովագրական պատահարով, այդ թվում կառույցի ավերված կամ վթարային վիճակի պատճառով,
 - գ) Ապրանքային արժեքի կորուստը (եթե այլ բան նախատեսված չի Պայմանագրով)
 - դ) Բարոյական վնասը,
 - ե) Գույքի վնասը կամ կորուստը (ոչնչացումը), որը վնասված է եղել նախքան ապահովագրության Պայմանագրի ուժի մեջ մտնելը, կամ չի վերականգնվել ավելի վաղ տեղի ունեցած և ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից, անկախ այդպիսի պատահարների՝ Ապահովագրողի կողմից որպես Ապահովագրական ճանաչումից:
- 3.7. Ապահովագրական պատահարների հատկանիշներ ունեցող ցանկացած իրադարձություն, որի հետևանքով առաջացել է գույքի վնաս, կորուստ կամ ոչնչացում, ներառյալ իրադարձությունները, երբ այդպիսի իրադարձության առաջացման ուղղակի պատճառը հանդիսացել է ապահովագրության Պայմանագրում նշված ռիսկերում չնշված պատահար, Ապահովագրողի կողմից դասվում է որպես առանձին պատահար՝ ըստ սույն Կանոններում և Լրացուցիչ Պայմաններում նշված համապատասխան ռիսկի:
- 3.8. Եթե Ապահովագիրը (Շահառուն) դիտավորյալ չի իրականացրել խելամիտ և հասանելի գործողություններ՝ ապահովագրական պատահարի արդյունքում հնարավոր վնասների նվազեցման համար, և դա հանգեցրել է ապահովագրական պատահարի արդյունքում վնասների ավելացմանը և/կամ հավելյալ վնասների առաջացմանը (այդ թվում վնասներ, որոնք հատուցման ենթակա չեն Կանոնների 3.2 կետի համաձայն), Ապահովագրողը ազատվում է այդպիսի վնասների հատուցման պարտավորությունից:
- 3.9. Քաղաքացիական պատասխանատվության ներքո ապահովագրական են համարվում պատահարները, որոնք նկարագրված են «Քաղաքացիական պատասխանատվության Լրացուցիչ Պայմաններում», այդ թվում պատահարները, որոնք կապված չեն Բաժին 2-ում նկարագրված գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ:

ԲԱԺԻՆ 4: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Ապահովագրական գումար է համարվում ապահովագրության պայմանագրով որոշված դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է (ապահովագրական պատահարների) ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով իրականացնել ապահովագրական հատուցում:
- Սույն Կանոններով կնքված Ապահովագրության Պայմանագրերում ապահովագրական գումարը կարող է նշվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ համարժեք արտարժույթով:

¹ Սույն ռիսկով հապտուցվում է միայն վնասը, որը չի առաջացել Կանոնների 3.2.1-3.2.3, 3.2.8 կետերում նշված պատահարների արդյունքում: Նշված պատահարները հապտուցվում են միայն «Ռիսկերի 3-րդ խումբի» ներքո:

- 4.2. Գույքային ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը չի կարող գերազանցել պայմանագրի կնքման պահին այդ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրական արժեքն ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրվող գույքի շուկայական (իրական) արժեքն է:
- 4.2.1. Ապահովագրի և Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրական գումարը կարող է սահմանվել թե որպես միասնական գումար՝ ապահովագրության օբյեկտների խմբի, ապահովագրության մեկ օբյեկտի համար, և թե որպես առանձին գումար՝ ապահովագրության օբյեկտի առանձին տարրերի (առարկաների) համար:
- 4.3. Եթե գույքի ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցել է դրա ապահովագրական արժեքը, ապա պայմանագիրը համարվում է անվավեր ապահովագրության այն մասով, որը գերազանցում է ապահովագրական արժեքը, իսկ ապահովագրավճարի վճարված ավելորդ մասը այս դեպքում վերադարձման ենթակա չէ:
- 4.3.1. Եթե գույքի ապահովագրական արժեքը որոշելիս մի կողմը տրամադրում է կեղծ տեղեկություններ ապահովագրման ենթակա գույքի իրական արժեքի վերաբերյալ, ապա մյուս կողմն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել դրա կապակցությամբ իր կրած վնասները և ծախսերը:
- 4.3.2. Եթե պայմանագրում ապահովագրական գումարի ավելացումն ապահովագրի խաբեության հետևանքն է, ապա ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել պայմանագիրը և հատուցելու իրեն պատճառված վնասները՝ ապահովագրից ստացած ապահովագրավճարի գումարը գերազանցող չափով:
- 4.4. Ապահովագրական արժեքը որոշվում է
- ա) **Կառույցների կրող կառուցվածքների համար**՝ այդպիսի կառույցի շինարարության արժեքի չափով՝ ենթարկված փաստաթղթային հաստատման, իսկ փաստաթղթային հաստատման բացակայության դեպքում՝ տվյալ վայրում այդպիսի կառույցի շինարարության արժեքի չափով (վերականգնողական արժեք)՝ հաշված նյութերի մաշվածությամբ և շահագործատեսիսկական վիճակով),
- բ) **Բնակարանների կրող կառուցվածքների համար**՝ բնակարանի ձեռքբերման արժեքի չափով (առանց հարդարման և ճարտարագիտական սարքավորումների)՝ ենթարկված փաստաթղթային հաստատման, իսկ փաստաթղթային հաստատման բացակայության դեպքում՝ համանման բնակարանի ձեռքբերման շուկայական միջին արժեքի չափով (առանց հարդարանքի և ճարտարագիտական սարքավորումների),
- գ) **Հարդարման և ճարտարագիտական սարքավորումների համար** փաստաթղթորեն հաստատված նյութերի, սարքավորումների և վերանորոգման կամ հարդարման տարրերի և (կամ) ճարտարագիտական սարքավորումների փոխարինումը դրանց ձեռքբերման արժեքի չափով՝ հանած նյութերի մաշվածությունը և վերանորոգման աշխատանքներն ու նյութերի՝ վերանորոգման վայր առաքումը, իսկ փաստաթղթային հաստատման բացակայության դեպքում՝ համանման նյութերի, սարքավորումների և հարդարման և (կամ) ճարտարագիտական սարքավորումների վերանորոգման համար պահեստային մասերի ձեռքբերման արժեքի չափով՝ հանած նյութերի մաշվածությունը և վերանորոգման աշխատանքներն ու նյութերի՝ վերանորոգման վայր առաքումը,
- դ) **Չարժական գույքի համար**՝ փաստաթղթորեն հաստատված համանման առարկայի ձեռքբերման արժեքի չափով՝ հանած մաշվածությունը, իսկ փաստաթղթային հաստատման բացակայության դեպքում՝ ապահովագրության ընդունվող համանման առարկայի ձեռքբերման միջին շուկայական արժեքի չափով,
- ե) **«Արժեքավոր գույք»** կարգին դասվող շարժական գույքի համար՝ փորձագետի եզրակացության, կողմերի համաձայնության կամ էլ ապահովագրության պայմանագրի կնքման պահին առարկայի համապատասխան տեսակի աճուրդային գնի հիման վրա,
- զ) **Բազմաբնակարան տան գույքի համար**՝ կառույցների կրող կառուցվածքների և ճարտարագիտական սարքավորումների ապահովագրական արժեքի համանման որոշմամբ՝ հանած նյութերի մաշվածությունը՝ կախված ապահովագրության ընդունվող գույքի կազմից:
- է) Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա կանաչապատման և բարելավման տարրերի (Բնապատկերի) նկատմամբ ապահովագրական գումարը որոշվում է՝ ելնելով կանաչապատման համանման առարկաների և բարելավման աշխատանքների արժեքից:
- 4.5. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել **«լրիվ»**, **«ոչ լրիվ»** կամ **«ոչ լրիվ ոչ համամասնական»** ապահովագրության պայմանների հիման վրա:
- 4.5.1. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված **«լրիվ»** ապահովագրության պայմանների հիման վրա, եթե ապահովագրական գումարը հավասար է գույքի ապահովագրական արժեքին:
- Այս դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ամբողջությամբ՝ որոշված ապահովագրական հատուցման վճարման պայմանների համաձայն (Կանոնների 13 բաժին)՝ «Ապահովագրական հատուցման վճարում»:
- 4.5.2. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված **«ոչ լրիվ»** ապահովագրության պայմանների հիման վրա, եթե ապահովագրական գումարը սահմանված է գույքի ապահովագրական արժեքից ցածր:
- Այս դեպքում վնասը հատուցվում է գույքի ապահովագրական արժեքի և ապահովագրական գումարի նկատմամբ համամասնորեն:

- 4.5.3. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված **«ոչ լրիվ ոչ համամասնական»** ապահովագրության պայմանների հիման վրա, եթե ապահովագրական գումարը սահմանված է գույքի ապահովագրական արժեքից ցածր, և և 4.5.2 կետում նշված համամասնությունը չի կիրառվում:
- Այդ դեպքում ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական գումարի սահմաններում ամբողջությամբ՝ որոշված համաձայն ապահովագրական հատուցման վճարման պայմանների (Կանոնների ԲԱԺԻՆ 13՝ «Ապահովագրական հատուցման վճարում»):
- Եթե ապահովագրության պայմանագրում չկա նշում «ոչ լրիվ ոչ համամասնական» պայմանի կիրառման մասին, ապա պայմանագիրը համարվում է կնքված «ոչ լրիվ» պայմանով:
- 4.6. Կողմերը իրավասու են պայմանավորվել ապահովագրության պայմանագրի մեջ ամրագրելու վնասի հատուցման ներքոնշյալ համակարգերից որևէ մեկը (կիրառելի է գույքի միայն մասնակի վնասի դեպքում: Ամբողջական կորստի (ոչնչացման) դեպքում կիրառելի չէ):
- 4.6.1. **«Նորը հնի փոխարեն»**՝ ենթադրում է, որ ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է առանց հաշվի առնելու գույքի մասերի (նյութերի) մաշվածության տոկոսը, ապահովագրական պատահարի արդյունքում փոխարինման կամ վերականգման ենթակա գույքի մասերի (նյութերի) մաշվածության տոկոսների հաշվմամբ՝ բացառությամբ ապահովագրված գույքի կորստի (ոչնչացման) դեպքերի, բայց ոչ ավել քան ապահովագրական գումարը,
- 4.6.2. **«Հինը հնի փոխարեն»**՝ ենթադրում է, որ ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է ապահովագրական պատահարի արդյունքում փոխարինման կամ վերականգման ենթակա գույքի դրա կառուցվածքային մասերի, նյութերի մաշվածության տոկոսի հաշվմամբ,
- 4.7. Ապահովագրության պայմանագրով կարող են նախատեսվել հատուցման տարբեր տեսակի սահմանափակումներ (ապահովագրողի հատուցման սահմանաչափեր), այդ թվում՝ կառույցների կամ բնակարանների տարրերի նկատմամբ մեկ ապահովագրական պատահարի համար վճարման սահմանաչափեր, վճարման առավելագույն սահմանաչափ և այլն:
- Սահմանաչափի տեսակը նշվում է ապահովագրության պայմանագրում:
- Ապահովագրության պայմանագրում մասնավորապես, կարող են սահմանվել Ապահովագրողի հատուցման հետևյալ Սահմանաչափերը՝
- 4.7.1. **«Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի»** համար՝ պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համարվում է ապահովագրության պայմանագրի գործողության ողջ ընթացքում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար ապահովագրական հատուցման վճարման սահմանային չափը: Ապահովագրության պայմանագիրը ավարտվում է լրիվ կամ համապատասխան չափով գույքի հափշտակման ինչպես նաև ապահովագրված գույքի կորստի (ոչնչացման) դեպքում հատուցման վճարման պահից:
- Ընդ որում, եթե հերթական ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում գույքը նախորդ ապահովագրական պատահարից հետո չի վերականգնվել (գույքի վերականգնման փաստի հաստատման համար Ապահովագիրը պարտավոր է ներկայացնել համապատասխան փաստաթղթերը), հատուցման սահմանաչափը նվազեցվում է նախորդ ապահովագրական պատահարով նախատեսված ապահովագրական հատուցման գումարով:
- 4.7.2. **«Ըստ առաջին դեպքի»**՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համարվում է ապահովագրության գործողության ամբողջ ընթացքում մեկ ապահովագրական պատահարի համար ապահովագրական հատուցման վճարման սահմանային չափ: Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է Ապահովագրի կողմից ապահովագրական պատահարի առաջին դիմումի ի հայտ գալու պահից:
- 4.7.3. **«Ըստ պայմանագրի»**՝ Պայմանագրով սահմանված գումարը համարվում է ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների համար ապահովագրական հատուցման վճարման սահմանաչափը:
- Ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրական գումարը նվազում է կատարված վճարման մեծությամբ: «Ըստ պայմանագրի» հատուցման սահմանաչափով ապահովագրության պայմանագիրը համարվում է կատարված և դադարեցնում է իր գործողությունը ապահովագրական գումարին համարժեք ապահովագրական գումարային հատուցման վճարման պահից կամ գույքի կորստի (ոչնչացման) փաստի համար ապահովագրական հատուցում վճարելուց հետո: Վնասված գույքի վերականգման կամ փոխարինման դեպքում Ապահովագիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել սկզբնական ապահովագրական գումարը: Ապահովագրական գումարի չվերականգման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի կիրառել Կանոնների 4.5.2 կետի համամասնության պայմանը:
- 4.7.4. Եթե Պայմանագրում նշված չէ հատուցման Սահմանաչափը, ապա այն համարվում է կնքված «Ըստ պայմանագրի» տարբերակով:
- 4.8. Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրական հատուցումը վճարելուց հետո ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը) նվազեցվում է կատարված ապահովագրական հատուցման չափով: Ապահովագիրը իրավունք ունի վերականգնել ապահովագրական գումարի (պատասխանատվության սահմանաչափի) չափը՝ սույն Կանոնների համաձայն ապահովագրության

պայմանագրի չլրացած ժամկետի համար՝ կնքելով լրացուցիչ պայմանագիր և վճարելով լրացուցիչ ապահովագրավճար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (մեկ տարի ժամկետով պայմանագրերի համար)։

$$U_{\text{լր}} = Z_v \cdot U_q \cdot \frac{U_{\text{առ}}}{12}, \text{ որտեղ}$$

$U_{\text{լր}}$ - սկզբնական ապահովագրական գումարը վերականգնելու համար լրացուցիչ ապահովագրավճար,
 Z_v - վճարվող ապահովագրական հատուցման գումար,
 U_q - պայմանագրով գործող ապահովագրական սակագին,
 $U_{\text{առ}}$ - պայմանագրի չլրացած լրիվ ամիսների քանակ:
Լրացուցիչ պայմանագիրը կնքվում է գրավոր:

ԲԱԺԻՆ 5: ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

- Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել Ապահովագրի կամ Շահառուի սեփական մասնակցության չափաբաժինը վնասի հատուցմանը՝ ֆրանշիզա:
- Ֆրանշիզան որոշվում է կողմերի համաձայնությամբ՝ դրամական համարժեքով, ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով և/կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ պայմաններով: Ֆրանշիզայի առկայությունն ու դրա չափը նշվում է ապահովագրության պայմանագրում:
- Ֆրանշիզան կարող է լինել «ոչ պայմանական» և «պայմանական»:
«Ոչ պայմանական» ֆրանշիզան նախատեսում է հատուցման նվազեցում սահմանված ֆրանշիզայի չափով՝ ըստ ապահովագրական պատահարի:
«Պայմանական» ֆրանշիզան նախատեսում է, որ Ապահովագրողը ազատվում է ֆրանշիզայի չափը չգերազանցող կամ դրան հավասար վնասի պատասխանատվությունից, բայց եթե վնասի չափը գերազանցում է ֆրանշիզան, ապա ապահովագրական հատուցման հաշվարկման դեպքում ֆրանշիզան հաշվի չի առնվում:
- Ֆրանշիզան կարող է սահմանվել պայմանագրով՝ մեկ ոլորտի կամ դրանց համակցության համար:

ԲԱԺԻՆ 6: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- Գույքը ապահովագրված է համարվում Ապահովագրության Պայմանագրում (Վկայագրում) նշված Ապահովագրական տարածքում՝ հասցեի կամ տարածքի տեսքով, որը կարող է լինել ինչպես ՀՀ պետական սահմանների ներսում, այնպես էլ դրանցից դուրս:
- Եթե ապահովագրված գույքը տեղափոխվում է ապահովագրության տարածքից դուրս, ապա այդ գույքի նկատմամբ ապահովագրության պայմանագիրը դադարում է՝ բացառությամբ սույն Կանոնների 6.3, 6.4 կետերով նախատեսված դեպքերի:
- Ապահովագրված գույքի՝ ապահովագրության տարածքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը իրավունք ունի պահանջելու ապահովագրության պայմանագրում ապահովագրության տարածք բաժնում փոփոխությունների իրականացում: Ապահովագրողն իրավունք ունի դիտարկելու տվյալ փոփոխությունները որպես ռիսկի մեծացմանը բերող պայմաններ և գործելու սույն Կանոնների բաժին 8-ին համապատասխան:
- Շարժական գույքի առանձին առարկաները կարող են լինել ապահովագրված առանց ապահովագրության տարածքի սահմանափակումների, եթե դա հատուկ սահմանված է ապահովագրության պայմանագրում:

ԲԱԺԻՆ 7: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- Պայմանագրի կնքման համար Ապահովագրողը սահմանում է ապահովագրավճարի (ապահովագրական պարգևավճարի) չափը, որը ենթակա է վճարման Ապահովագրի կամ նրա ներկայացուցչի կողմից:
- Ապահովագրավճարի չափը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողի կողմից՝ հիմք ընդունելով Ապահովագրական սակագինը:
- Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է: Այն սահմանվում է՝ ելնելով ապահովագրության համաձայնեցված պայմանների գծով պարտականությունների ծավալից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից, ապահովագրության օբյեկտի գտնվելու վայրից,

տեսակից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա, այդ թվում չհատուցվող գումարի առկայությունից և չափից:

- 7.4. Ապահովագրավճարի չափը սահմանելիս բազային սակագների վրա կարող են կիրառվել կարգավորիչ գործակիցներ՝ ինչպես բարձրացնող, այնպես էլ իջեցնող, որոնք կախված են ռիսկի բնույթից, և այլ գործոններից, այդ թվում՝ ապահովագրական նախորդ փորձից:
- 7.5. Մեկ տարուց պակաս ապահովագրության ժամանակ սակագինը հաշվարկվում է ըստ հետևյալ աղյուսակի.

Ապահովագրության ժամկետ ամիսներով	Վճարվելիք ապահովագրավճար տոկոսներով տարեկան ապահովագրավճարի նկատմամբ
1	30 %
2	37 %
3	44 %
4	50 %
5	56 %
6	63 %
7	69 %
8	75 %
9	81 %
10	88 %
11	94 %
12	100 %

- 7.6. Ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ և արժույթային կարգավորման այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի:
Ոչ ռեզիդենտների հետ վճարումները իրականացվում են գործող օրենսդրության համաձայն:
- 7.7. Ապահովագրավճարը կարող է վճարվել ապահովագրության օբյեկտի նկատմամբ որևէ իրավունք չունեցող անձի կողմից: Ընդ որում՝ տվյալ անձը Պայմանագրի/Վկայագրի գծով պարտականություններ չի ստանձնում և իրավունքներ ձեռք չի բերում:
- 7.8. Ապահովագրավճարը Ապահովադրի կողմից կարող է վճարվել ինչպես կանխիկ՝ Ապահովագրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի դրամարկղում, այնպես էլ անկանխիկ՝ փոխանցելով Ապահովագրողի հաշվարկային հաշվին: Ապահովագրավճարի անկանխիկ վճարման դեպքում Ապահովադրի վճարման հանձնարարականում պարտավոր է հղում տալ այն Պայմանագրի (Վկայագրի) համարի վրա, որի համար վճարվում է ապահովագրավճարը, և/կամ վճարման հաշվի համարի և ամսաթվի վրա (եթե վճարումը իրականացվում է՝ համաձայն Ապահովագրողի կողմից դուրս գրված հաշվի):
Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ է համարվում.
Ա) Կանխիկ վճարման դեպքում՝ ապահովագրավճարի կամ դրա հերթական մասի մուտքի ամսաթիվը Ապահովագրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի դրամարկղ,
Բ) Անկանխիկ վճարման դեպքում՝ ապահովագրավճարի կամ դրա հերթական մասի մուտքը Ապահովագրողի հաշվարկային հաշվի:
- 7.9. Ապահովագրավճարը Ապահովագրության Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրության ամբողջ ժամկետի համար, կամ տարաժամկետ՝ ապահովագրավճարի մի քանի վճարումների տեսքով:
Ապահովագրավճարը (կամ դրա առաջին մասը) Ապահովադրի կողմից վճարվում է Պայմանագրի կնքման պահին, կամ Պայմանագրով նախատեսված այլ ժամկետում:
Ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները որոշվում են ապահովագրության պայմանագրով:
- 7.10. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չձանուցել այդ մասին Ապահովադրին և ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանել ապահովագրավճարի վճարման լրացուցիչ ժամկետներ և այդ մասին ծանուցել Ապահովագրին: Լրացուցիչ ժամկետի սահմանման դեպքում Ապահովագրողը միևնույն է ազատվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:

- 7.11. Եթե Պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման կարգ, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի չվճարված ամբողջ գումարը:

ԲԱԺԻՆ 8: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

- 8.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա:
- Ապահովագրության պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով (տարեկան պայմանագիր), մեկ տարուց պակաս ժամկետով (կարճաժամկետ պայմանագիր) կամ մեկ տարուց ավել ժամկետով (երկարաժամկետ պայմանագիր):
- 8.2. Ապահովագրողը Ապահովագրողի պահանջով պարտավոր է տրամադրել՝
- 8.2.1. իրավաբանական անձ Ապահովագրի հիմնադիր փաստաթղթեր, իսկ ֆիզիկական անձ Ապահովագրի դեպքում՝ անձնագիրը և սոցիալական քարտը,
 - 8.2.2. Ապահովագրի կամ նրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթ,
 - 8.2.3. Ապահովագրի ներկայացուցչի կարգավիճակը և լիազորությունները հաստատող լիազորագիր կամ այլ փաստաթուղթ,
 - 8.2.4. գույքի գրանցման փաստաթղթեր, Ապահովագրողի պահանջով ապահովագրվող շահը հաստատող փաստաթղթեր,
 - 8.2.5. ապահովագրական ռիսկը գնահատելու համար Ապահովագրողին անհրաժեշտ այլ փաստաթղթեր:
- 8.3. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողը պարտավոր է Ապահովագրին հայտնել իրեն հայտի բոլոր հանգամանքները, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրվող գույքի ռիսկի գործոնի չափի որոշման համար: Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության տիպային պայմանագրում, հավելվածներում կամ նրա գրավոր հարցումում Ապահովագրողի կողմից հստակ որոշված հանգամանքները:
- 8.4. Ապահովագրության պայմանագիրը կազմվում է գրավոր և կարող է կնքվել մեկ փաստաթղթի կազմման կամ Ապահովագրողից Ապահովագրին նրա գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողի ստորագրությամբ ապահովագրական վկայագրի (վկայականի կամ այլ փաստաթղթի) շնորհման ճանապարհով:
- Ապահովագրության Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը Ապահովագրին պարտավոր է տրամադրել սույն Կանոնները կամ սույն Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են սույն Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):
- Սույն Կանոնները Ապահովագրին կարող են տրամադրվել ինչպես թղթային տպված տարբերակով (այդ թվում՝ գրքույկի տեսքով), այնպես էլ Ինտերնետում Կանոնների էլեկտրոնային հասցեն (URL) տրամադրելու, կամ Կանոնների ֆայլը Ապահովագրի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ թվային կրիչներով (CD, DVD, և այլն):
- Եթե կանոնները տրամադրվել են այլ եղանակով, քան թղթային տեսքում է, Ապահովագրողը (Շահառուն) չի ազատվում սույն Կանոններով նախատեսված ոչ մի պարտավորությունից: Ապահովագրողը ցանկացած ժամանակ իրավունք ունի դիմել Ապահովագրողին և ստանալ Կանոնների թղթային օրինակները:
- 8.5. Ապահովագրության Պայմանագրի ընդունումը Ապահովագրին է տրամադրվում Պայմանագրի կնքման պահին, կամ կողմերի համաձայնությամբ այլ ժամկետներում:
- 8.6. Ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում, Ապահովագրի գրավոր դիմումի հիման վրա նրան տրվում է կրկնօրինակը,
- 8.7. Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման պահից (եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ), այսինքն՝
- ✓ անկանխիկ վճարման կարգի դեպքում ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի (տարաժամկետ վճարման դեպքում)՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին վճարման պահից, բայց ոչ շուտ քան ապահովագրության Պայմանագրի գործողության սկզբի ամսաթիվն է,

- ✓ ապահովագրավճարի կանխիկ վճարման կարգի դեպքում՝ ամբողջ ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի (տարաժամկետ վճարման դեպքում) վճարման պահից բայց ոչ շուտ քան ապահովագրության Պայմանագրի գործողության սկզբի ամսաթիվից:
- Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսվում է վերջինիս այլ պահից ուժի մեջ մտնելը, և ամբողջ ապահովագրավճարը կամ դրա առաջին մասը սահմանված ժամկետում չի վճարվել, Ապահովագրողը իրավասու է միակողմանի դադարեցնել պայմանագիրը՝ Ապահովագրին ուղարկելով գրավոր ծանուցագիր: Այս դեպքում պայմանագրի դադարեցման ամսաթիվ է համարվում ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման ամսաթիվը:
- Եթե ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ չի մտել Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագիրը դադարեցնելու իրավունքի առաջացման պահին՝ սույն կետով սահմանված կարգով, ապա պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած և կողմերի համար որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում:
- 8.8. Սույն Կանոնների հիման վրա ապահովագրության պայմանագիր կնքելով՝ Ապահովագիրը հաստատում է իր համաձայնությունը նրանում, որ ապահովագրության պայմանագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում Ապահովագրողը կարող է իրականացնել այնտեղ նշված ֆիզիկական անձանց անհատական տվյալների մշակում և օգտագործում:
- Ապահովագիրը անձնական պատասխանատվություն է կրում ապահովագրության դիմումում և/կամ ապահովագրության պայմանագրում նշված ֆիզիկական անձ Շահառուի և այլոց՝ նրանց անհատական տվյալների մշակման համաձայնություն տալու համար: Սույն Կանոններում անհատական տվյալների մշակում ասելով՝ հասկանում ենք ֆիզիկական անձանց անհատական տվյալների հավաք, համակարգում, կուտակում, պահպանում, ճշտում (նորացում, փոփոխում), օգտագործում, կոդավորում, վնասագեղծում, ինչպես նաև այլ գործողությունների իրականացում՝ վիճակագրական և ապահովագրական ռիսկերի վերլուծության իրականացման նպատակներով: Սույն Կանոնների հիման վրա ապահովագրության պայմանագիր կնքելով՝ Ապահովագիրը նույնպես հաստատում է այլ ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև Ապահովագրողի հետ իրավահարաբերությունների երկարացման պայմանների մասին տեղեկատվություն տրամադրելու համաձայնությունը: Վերը նշված նպատակների իրականացման համար Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անհատական տվյալները փոխանցել երրորդ անձանց, որոնց հետ Ապահովագրողը կնքել է համապատասխան համաձայնություններ՝ ապահովելով անհատական տվյալների վստահելի պահպանությունը և գաղտնիությունը: Ապահովագրողը պարտավորվում է ապահովել Ապահովագրի անհատական տվյալների պահպանություն և չիրապարակում այլ նպատակներով, քան նախատեսված է սույն հոդվածներում: Անհատական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնությունը կարող է ետ կանչվել անհատական տվյալներով սուբյեկտի կողմից՝ լրիվ կամ այլ ապրանքների և ծառայությունների մասին տեղեկատվության մասով, Ապահովագրողին գրավոր դիմումի ուղարկման ճանապարհով՝ թույլատրող հավաստի հաստատելու տվյալ դիմումի ընդունման ամսաթիվը Ապահովագրողի կողմից:
- Իր համաձայնությամբ անհատական տվյալների մշակման համար սուբյեկտի կողմից դրանց լրիվ ետ կանչման դեպքում այդ անձի ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է, իսկ Ապահովագիրը հանդիսացող սուբյեկտի կողմից այդպիսի համաձայնության ետ կանչման դեպքում ապահովագրության պայմանագիրը դադարում է ամբողջությամբ: Ընդ որում, ապահովագրության պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է Ապահովագրողի կողմից անհատական տվյալների մշակման համաձայնության ետ կանչման համապատասխան դիմումի ստացման ամսաթիվից: Ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման (այդ թվում՝ դրա լուծման), ինչպես նաև իր անհատական տվյալների մշակման վերաբերյալ անհատական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ետ կանչման դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է վերացնել այդպիսի անհատական տվյալները ապահովագրության պայմանագրի գործողության 100(հարյուր) տարին չգերազանցող ժամկետում կամ Ապահովագրողի կողմից անհատական տվյալների մշակման համաձայնության ետ կանչման դիմումի ստացման պահից:
- 8.9. Ապահովագրության պայմանագիրը դադարում է հետևյալ դեպքերում՝
- 8.9.1. Եթե Պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է,
 - 8.9.2. Ապահովագրողի կողմից Պայմանագրով սահմանված ամբողջ Ապահովագրական գումարի չափով պարտավորությունների կատարման դեպքում,
 - 8.9.3. Ապահովագրի կողմից ցանկացած ժամանակ Պայմանագրից հրաժարման դեպքում, եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորությունը վերացել է այլ հանգամանքներով, քան ապահովագրական պատահարն է,
 - 8.9.4. Եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորությունը, ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահար չհանդիսացող դեպքերից (այդ թվում գույքային շահի փոխանցում՝ վաճառքի, նվիրատվության կամ այլ ձևով, և այլն),
 - 8.9.5. Ապահովագրի և Ապահովագրողի համաձայնությամբ պայմանագրի լուծման դեպքում,
 - 8.9.6. Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում՝ համաձայն սույն Կանոնների և/կամ ապահովագրության Պայմանագրի (այդ թվում ապահովագրավճարի չվճարման հիմքով՝ համաձայն 7.10 կետի),

- 8.9.7. Ապահովագիր համարվող սուբյեկտի անհատական տվյալների մշակման, Կանոնների կետերի համաձայն՝ անհատական տվյալների ամբողջությամբ ետ կանչման դեպքում: Ընդ որում այդպիսի համաձայնության ամբողջությամբ ետ կանչումը համարվում է ապահովագրության պայմանագրից հրաժարում և պայմանագրով վճարվող ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ,
- 8.9.8. ՀՀ գործող օրենսդրությամբ, սույն Կանոններով կամ ապահովագրության պայմանագրի պայմաններով սահմանված այլ դեպքերում:
- Կանոնների 8.9.1, 8.9.2, 8.9.4 կետերով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագիրը համարվում է դադարեցված տվյալ հիմքերի առաջացման պահից:
- Կանոնների 8.9.3, 8.9.7 կետերով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագիրը համարվում է դադարեցված Ապահովագրի կողմից դիմումի ներկայացման ամսաթվից, եթե դիմումում ավելի ուշ ամսաթիվ նշված չէ:
- Կանոնների 8.9.5 կետով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Պայմանագիրը համարվում է դադարեցված Կողմերի միջև համապատասխան համաձայնագրի ստորագրման օրվանից, եթե համաձայնագրով ավելի ուշ ամսաթիվ նախատեսված չէ:
- Կանոնների 8.9.6 կետով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում, Պայմանագիրը համարվում է դադարեցված Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ամսաթվից, իսկ եթե Պայմանագիրը դադարեցվել է ապահովագրավճարի չվճարման հիմքով՝ ապահովագրավճարի կամ դրա մասի վճարման ենթակա ամսաթվից, կամ Ապահովագրողի կողմից ծանուցում ուղարկելու դեպքում՝ ծանուցմամբ նախատեսված ամսաթվից:
- Կանոնների 8.9.8 կետով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում, Պայմանագիրը համարվում է դադարեցված ՀՀ Օրենսդրությամբ սահմանված, սույն Կանոններով կամ ապահովագրության Պայմանագրի պայմաններով սահմանված ժամկետից, կամ Կողմերի միջև կնքված համաձայնագրով սահմանված ժամկետից:
- Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պարտավորությունից այն ապահովագրական պատահարների համար, որոնք տեղի են ունեցել պայմանագրի դադարեցման կամ վաղաժամկետ լուծարման օրվանից հետո:
- 8.10. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Կանոնների 8.9.1, 8.9.2, 8.9.6, 8.9.7 կետերի համաձայն Պայմանագրի դադարեցման կամ վաղաժամկետ լուծարման դեպքում վճարված ապահովագրավճարն ամբողջությամբ համարվում է վաստակած և ենթակա չէ վերադարձման:
- Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Կանոնների 8.9.3 կետի համաձայն Պայմանագրի դադարեցման կամ վաղաժամկետ լուծարման դեպքում վճարված ապահովագրավճարը ամբողջությամբ համարվում է վաստակած, բացառությամբ Կանոնների 9.4.1 կետով նշված դեպքերի:
- 8.11. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Կանոնների 8.9.4 կետի համաձայն Պայմանագրի դադարեցման կամ վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողը Ապահովագրին ետ է վերադարձնում չգործած օրերի համար վճարված ապահովագրավճարը՝ համամասնորեն հաշվարկված:
- 8.12. Կանոնների 8.9.5 կետով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովագրողը Ապահովագրին վերադարձնում է սույն Կանոնների 8.13 կետի համաձայն հաշվարկված ապահովագրավճարի մասը:
- 8.13. Ապահովագրական պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը նետտո ապահովագրավճարից համամասնորեն վերադարձնում է ապահովագրական պայմանագրի չլրացած օրերի գծով վճարված ապահովագրավճարը: Նետտո ապահովագրավճար է համարվում ապահովագրավճարի դիսկային մասնաբաժինը, որն առաջանում է բրուտտո ապահովագրավճարի և գործառնական և պայմանագրի թողարկման համար կատարվող այլ ծախսերի բեռնվածության տարբերությունից: Բեռնվածության գումարը կազմում է առաջին տարվա ապահովագրավճարի 25%-ը և յուրաքանչյուր հաջորդ տարվա ապահովագրավճարի 15%-ը:
- 8.14. Կանոնների 8.9.8 կետով Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարի վերադարձման հարցը լուծվում է՝ կախված դադարեցման հիմքից:
- 8.15. Վերադարձման ենթակա ապահովագրավճարը վճարվում է Պայմանագրի դադարեցման կամ վաղաժամկետ լուծման ամսաթվից հետո 15 օրացույցային օրվա ընթացքում, կամ կողմերի համաձայնությամբ՝ այլ ժամկետների ընթացքում:

ԲԱԺԻՆ 9: ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Ապահովագրողը պարտավոր է.

- 9.1.1. Տրամադրել սույն Կանոնները կամ սույն Կանոններից քաղվածք, որոնք ստեղծվել են սույն Կանոնների դրույթների հիման վրա և վերաբերվում են ապահովագրության կոնկրետ ծրագրին (ապահովագրական պրոդուկտին), և որի հիման վրա էլ կնքվում է Պայմանագիրը (այդ մասին նշվում է Պայմանագրում):
- Սույն Կանոնները Ապահովագրին կարող են տրամադրվել ինչպես թղթային տպված տարբերակով (այդ թվում՝ գրքույկի տեսքով), այնպես էլ էլեկտրոնային Կանոնների էլեկտրոնային հասցեն (URL) տրամադրելու, կամ Կանոնների

Ֆայլը Ապահովագրի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ թվային կրիչներով (CD, DVD, և այլն):

- 9.1.2. Ապահովագրության Պայմանագրով և սույն Կանոններով նախատեսված պատահարի տեղի ունենալու դեպքում կայացնել ապահովագրական հատուցման վճարման որոշում կամ մասնակի կամ ամբողջական մերժման պատճառաբանված որոշում՝ հայտի կարգավորման համար Կանոնների 13.1 և 12.2 կետերով սահմանված անհրաժեշտ վերջին փաստաթուղթը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, բացառությամբ սույն Կանոնների 9.2.13 կետերով սահմանված դեպքերի և սույն կետի հաջորդ պարբերության: Հատուցման վճարման, մասնակի հատուցման կամ մերժման պատճառաբանված եզրակացությունը ծանուցվում է որոշումից հետո 5-օրյա ժամկետում:

Եթե Պայմանագրի համաձայն հատուցումը իրականացվում է բնակարանի ձևով (Կանոնների 13.2.2 կետ), ապահովագրական հատուցման վճարման ժամկետը երկարաձգվում է մինչև Ապահովագրողի հետ պայմանագիր կնքած կազմակերպության կողմից վերանորոգման, շինարարական (վերականգման) աշխատանքների կատարման ժամկետը (ապահովագրության հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից կատարված աշխատանքները ընդունելուց հետո):

- 9.1.3. Չբարձրաձայնել Ապահովագրի (Շահառուի) և նրա գույքային վիճակի մասին տեղեկատվություն, բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

- 9.1.4. Ապահովագրի (Շահառուի), ինչպես նաև ապահովագրության Պայմանագիր կնքելու ցանկություն ունեցող անձանց պահանջով պարզաբանել Կանոնների և Պայմանագրի դրույթները, Ապահովագրական գումարի և ապահովագրավճարի հաշվարկման կարգը:

9.2. Ապահովագրողը իրավունք ունի.

- 9.2.1. Պայմանագրի գործողության ցանկացած պահի ստուգել ապահովագրված գույքի վիճակը, և ռիսկի աստիճանի փոփոխության մասին տեղեկատվություն ստանալու դեպքում իրականացնել դրա վերազնահատում, պահանջել Պայմանագրի դրույթների փոփոխություն և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի գանձում ռիսկի աստիճանի մեծացմանը համապատասխան:

- 9.2.2. Պահանջել վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը մինչև դրա ժամկետի ավարտը, եթե Ապահովագիրը (Շահառուն) չի համաձայնվում 9.2.1 Կետով սահմանված դեպքում լրացուցիչ Պայմանների և հավելավճարի հետ, կամ վերոնշյալի կապակցությամբ չի կատարում Ապահովագրողի ցուցումները:

- 9.2.3. Ապահովագրին (Շահառուին) կատարել ցուցումներ և ձեռնարկել միջոցներ՝ վնասի չափի պակասեցման և հանգամանքների, պատճառների և հնարավոր մեղավոր անձանց բացահայտելու համար,

- 9.2.4. Պահանջել լուծարել ապահովագրության Պայմանագիրը, եթե Պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ Ապահովագիրը Ապահովագրողին հայտնել է կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, որոնք ունեն էական դեր պատահարի տեղի ունենալու հավանականության և ռիսկի աստիճանի գնահատման համար, տրամադրել կեղծ փաստաթղթեր կամ տրամադրված փաստաթղթերում առկա տեղեկությունները կեղծ են կամ անարժանահավատ: Ցանկացած դեպքում էական են համարվում այն հանգամանքները, որոնք նշված են ապահովագրության Պայմանագրում և/կամ հարցաթերթիկում:

- 9.2.5. Վիճարկել ապահովագրության պայմանագրում նշված գույքի ապահովագրական արժեքը, այն դեպքում, երբ Ապահովագրողը, չգտվելով իր իրավունքից իրականացնել գույքի գնահատում նախքան պայմանագրի կնքումը, միտումնավոր մոլորեցվել է գույքի արժեքի կապակցությամբ:

- 9.2.6. Ապահովագրավճարի հաշվարկման ժամանակ կիրառել ճշգրտող գործակիցներ՝ կախված ռիսկի աստիճանից, այդ թվում նախկին ապահովագրությունից:

- 9.2.7. Ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրավճարի (դրա 1-ին մասի) հետաձգված (տարաժամկետ) վճարման պարագայում Ապահովագրին պահանջ ներկայացնել վճարել ապահովագրավճարի (դրա 1-ին մասի) հետաձգված մասը, ինչպես նաև երկարաձգել ապահովագրական հատուցման որոշման կայացումը մինչև պահանջված գումարի ստացումը:

- 9.2.8. Եթե ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրավճարը ամբողջությամբ վճարված չի Պայմանագրի ամբողջ ժամկետի համար, բայց առկա չէ հերթական վճարումների ժամկետանցություն, Ապահովագրին պահանջ ներկայացնել վճարել մնացած ապահովագրավճարը Պայմանագրի ամբողջ ժամկետի համար,

- 9.2.9. Ապահովագրին ամբողջ ապահովագրավճարի վճարման պահանջ ներկայացնելու դեպքում երկարաձգել ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելը մինչև այդպիսի գումարի ստացումը:

- 9.2.10. Միակողմանի լուծարել ապահովագրության Պայմանագիրը՝ ապահովագրության Պայմանագրով սահմանված ժամկետում ապահովագրավճարի կամ դրա հերթական մասի չվճարման դեպքում այդպիսի վճարման ամսաթվի դրությամբ, այդ մասին ծանուցելով Ապահովագրին: Ընդ որում, վճարված ամբողջ ապահովագրավճարը համարվում է վատարկված և ենթակա չէ վերադարձման:

- 9.2.11. ՀՀ Օրենսդրության համաձայն իրավասու մարմիններին, կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին դիմել՝ ապահովագրական հատուցման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ ստանալու համար, ինչպես նաև ինքնուրույն անցկացնել ստուգումներ՝ ներգրավելով համապատասխան փորձագետների:

- 9.2.12. Կրճատել 8.2 և 13.1 կետով սահմանված Ապահովադրի (Շահառուի) կողմից ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը ապահովագրության Պայմանագրի կնքման և հատուցման որոշման համար, եթե կրճատումը չի ազդում ռիսկի գնահատման, ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի, ինչպես նաև վնասի չափի և ապահովագրական հատուցումը ստացողի որոշման վրա:
- 9.2.13. Մինչև հետաքննության կամ դատական վիճարկման ավարտը հետաձգել ապահովագրական հատուցման վճարման մասին որոշումը՝
Ա) գույքի առևանգման համար, եթե համապատասխան իրավապահ մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ գողության փաստով,
Բ) եթե համապատասխան իրավապահ մարմինների կողմից քրեական գործ է հարուցվել Ապահովադրի կամ նրա կողմից լիազորված մարմինների դեմ կամ իրականացվում է վնասի առաջացմանը բերող հանգամանքների հետաքննություն:
- 9.2.14. Իր հայեցողությամբ մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետևանքով առաջացած վնասի վերջնական չափը որոշելը, դրա արդեն որոշված մասի սահմաններում իրականացնել ապահովագրական հատուցման մասնակի վճարում:
- 9.2.15. ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ապահովագրության Պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացրած անձնական տվյալների մշակում (այդ թվում՝ տարածում, օգտագործում, պահպանում, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրում), ապահովագրական գործունեության իրականացման, ապահովագրական պրոդուկտների մասին տեղեկացման նպատակով, այդ թվում Ապահովադրի հետ ուղիղ կապի դուրս գալու միջոցով կապի միջոցների օգնությամբ, ինչպես նաև այլ նպատակներով՝ չարգելված ՀՀ Օրենսդրությամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 9.2.16. Ապահովադրից պահանջել իրեն փոխանցել ապահովագրված գույքի կամ դրա մի մասի իրավունքները, որի համար ապահովագրական գումարի չափով իրականացվել է հատուցում,
- 9.2.17. Իրականացնել այլ գործողություններ՝ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարման համար:
- 9.2.18. Իր հայեցողությամբ մերժել ապահովագրական հատուցման լրիվ կամ մասնակի վճարումը այն ապահովագրական դեպքերի համար, որոնց անմիջական պատճառն է հանդիսացել օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված նորմերի և կանոնների խախտումը: Ապահովագրական հատուցումը վճարվում է ամբողջ ծավալով, եթե այդ նորմերի և կանոնների խախտումը կապված չէ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների հետ:
- 9.3. Ապահովադիրը պարտավոր է.**
- 9.3.1. Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրվող գույքի՝ այլ ապահովագրական ընկերությունների հետ ունեցած գործող ապահովագրության պայմանագրերի մասին:
- 9.3.2. Վճարել ապահովագրավճարը ապահովագրական Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով:
- 9.3.3. Անընդհատ հոգ տանել ապահովագրված գույքի մասին այնպես, կարծես այն ապահովագրված չէ ընդհանրապես, ձեռնարկել բոլոր խելամիտ և նպատակահարմար քայլերը դրա պահպանման և փրկման ուղղությամբ և պահել իրեն այնպես, կարծես այդ գույքի նկատմամբ ապահովագրական պաշտպանվածություն չի գործել ընդհանրապես:
- 9.3.4. Հետևել ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված վերանորոգման-շինարարական աշխատանքների կատարման, ջրատար, կոյուղու, ջեռուցման, սառեցման համակարգերի և օդափոխանակության համակարգի օգտագործման, տարածքների և շարժական գույքի պահպանման, հակահրդեհային անվտանգության նորմերը և կանոնները, տեխնիկական օգտագործման կանոնները, սանիտարա-հիգիենիկ պահանջները և այլն, այդ թվում ապահովագրության օբյեկտի անվտանգությունը և պիտանելիությունը ապահովող միջոցառումները, ապահովել ապահովագրվող տարածք ազատ մուտքի արգելքը:
- 9.3.5. Վերացնել ապահովագրական ռիսկի էական մեծացման վրա ազդող հանգամանքները, որոնց վերացման համար Ապահովագրողից ստացել է գրավոր ցուցում:
- 9.3.6. Մինչև ապահովագրավճարի (դրա 1-ին մասի) հետաձգված (տարաժամկետ) վճարման պահը տեղի ունացած ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի պահանջով պահանջի ներկայացումից 10 օրացույցային օրվա ընթացքում կատարել պահանջվող գումարի վճարումը,
- 9.3.7. Եթե ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրավճարը ամբողջությամբ վճարված չի Պայմանագրի ամբողջ ժամկետի համար, բայց առկա չէ հերթական վճարումների ժամկետանցություն, Ապահովագրողի պահանջով պահանջի ներկայացումից 10 օրացույցային օրվա ընթացքում կատարել պահանջվող գումարի վճարումը,
- 9.3.8. Ապահովագրավճարը անկանխիկ եղանակով վճարելու դեպքում վճարման հանձնարարականում հղում կատարել վճարման հաշվի համարի, ամսաթվի և/կամ ապահովագրության Պայմանագրի համարի վրա, որի համար կամ հիմքով կատարվում է վճարումը,
- 9.3.9. Անմիջապես, հենց որ դա իրեն հայտնի դառնա, գրավոր ծանուցել Ապահովագրողին էական հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ռիսկի աստիճանի մեծացման վրա ազդող էական հանգամանքներ, ամեն դեպքում, ճանաչվում են ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնաձեռնվող փոփոխություններում, ինչպես նաև ցանկացած դեպքում՝ ապահովագրված շինությունում ձևափոխություն (վերակառուցում, վերազինում), ապահովագրված շինության

բանալիների կորուստ, անսարքությունների հայտնաբերում կամ պահակային կամ հակահրդեհային համակարգերի անջատում (այդ թվում՝ սպասարկման պատճառով):

- 9.3.10. Ապահովագրողի պահանջով նրան փոխանցել ապահովագրված գույքի կամ դրա մի մասի իրավունքները, որոնց համար Ապահովագրողը ապահովագրական գումարի չափով իրականացրել է ապահովագրական հատուցում, կամ Ապահովագրողի ցուցումով իրականացնել այլ գործողություններ վնասի նվազեցման նպատակով, այդ թվում ձևակերպել լիազորագրեր այդպիսի գույքի իրացման և իրացման արդյունքում գոյացած միջոցները Ապահովագրողի հաշվին վճարման համար:
- 9.3.11. Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրա համապատասխան մասը), եթե բացահայտվել են հանգամանքներ, որոնք օրենքով կամ սույն ապահովագրության Կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում են Ապահովագրողին (Շահառուին) ապահովագրական հատուցման ստացման իրավունքից:
- 9.3.12. Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովագրողը իրավունք չունի երրորդ անձանց հատուցումն իրականացնել, խոստումներ տալ, վնասների կամավոր հատուցման առաջարկություններ անել, լիովին կամ մասնակի ճանաչել իր պատասխանատվությունը:

9.4. Ապահովագրողը իրավունք ունի.

- 9.4.1. Վաղաժամկետ հրաժարվել ապահովագրության Պայմանագրից.

1) Ապահովագրող-ֆիզիկական անձը ի լրումն Կանոնների 8.8 կետով սահմանված ապահովագրական Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման պայմանների, իրավունք ունի վաղաժամկետ հրաժարվել ապահովագրության պայմանագրից դրա կնքումից հետո 14 (տասնչորս) օրացույցային օրվա ընթացքում, անկախ ապահովագրավճարի վճարման հանգամանքի, պայմանով, որ այդ ժամկետի ընթացքում ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություններ տեղի չեն ունեցել:

2) Եթե Ապահովագրողը հրաժարվել է ապահովագրական Պայմանագրից 9.4.1 կետով նշված ժամկետում և կնքված Պայմանագրով մինչև Ապահովագրողի պարտավորությունների առաջացման ամսաթիվը (այսուհետ՝ ապահովագրության սկզբի ամսաթիվ), վճարված ապահովագրավճարը ամբողջությամբ ենթակա է վերադարձման Ապահովագրողին:

3) Եթե Ապահովագրողը հրաժարվել է ապահովագրական Պայմանագրից 9.4.1 կետով նշված ժամկետում բայց ապահովագրության սկզբի ամսաթվից հետո, Ապահովագրողը վճարված ապահովագրավճարը Ապահովագրողին վերադարձման ժամանակ պահում է ապահովագրության սկզբի ամսաթվից մինչև հրաժարման օրը գործած օրերի համար ապահովագրավճարի մասը համամասնորեն՝ հաշվարկված ամբողջ ժամկետի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

4) Սույն կետով նախատեսված կարգով պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում, ապահովագրության Պայմանագիրը համարվում է դադարեցված Ապահովագրողի կողմից ապահովագրության Պայմանագրից հրաժարման Ապահովագրողի գրավոր դիմումի ստացման ամսաթվից, կամ կողմերի միջև համաձայնեցված այլ ամսաթվից, բայց ոչ ուշ, քան սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետը:

5) Սույն կետի համաձայն Ապահովագրողին ապահովագրավճարի վերադարձը Ապահովագրողի ընտրությամբ իրականացվում է կամ կանխիկ, կամ անկանխիկ եղանակով՝ Ապահովագրողի կողմից ապահովագրության Պայմանագրից հրաժարման Ապահովագրողի գրավոր դիմումի ստացման ամսաթվից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն կետը չի տարածվում այն ապահովագրության Պայմանագրերի վրա, որոնց Ապահովագրողը Անհատ Ձեռնարկատեր է, կամ իրավաբանական անձ:

- 9.4.2. Ներկայացնել ապահովագրության պայմանների փոփոխության դիմում,
- 9.4.3. Ապահովագրության Պայմանագրով և սույն Կանոններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում:
- 9.4.4. Ապահովագրության ժամկետի ընթացքում ապահովագրության Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողից, դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը: Կրկնօրինակի տրամադրման պահից սկսած կորած պայմանագիրը համարվում է անվավեր:
- 9.4.5. Ապահովագրողից ապահովագրական հատուցման մերժման դեպքում ստանալ դրա հիմնավորումը և պատճառաբանումը:
- 9.4.6. Ապահովագրողից պահանջել պարգաբանել սույն Կանոնների և ապահովագրության պայմանագրի դրույթները, հաշվարկները, ապահովագրավճարի վճարման կարգը և այլ դրույթներ:

ԲԱԺԻՆ 10: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 10.1. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝
- 10.1.1. Ապահովադիրին (Շահառուին) հայտնի դառնալուց հետո անմիջապես, առաջին իսկ հնարավորության դեպքում այդ մասին տեղեկացնել համապատասխան իրավասու մարմնին՝ իրավապահ մարմիններին, հրշեջ ծառայությանը (եթե տեղի է ունեցել հրդեհ), կամ կախված պատահարի բնույթից, համապատասխան վթարային ծառայությանը,
- 10.1.2. Իրականացնել բոլոր հնարավոր միջոցառումները վնասների կանխման կամ փոքրացման, ինչպես նաև ապահովագրված գույքի փրկման ուղղությամբ,
- 10.1.3. Ապահովադիրին (Շահառուին) հայտնի դառնալուց հետո 2 (երկու) ժամվա ընթացքում այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին՝ զանգի, կամ էլեկտրոնային նամակի, կամ ցանկացած այլ տարբերակով, որը հնարավորություն կտա ֆիքսել տեղեկացման պահը,
- 10.1.4. Ապահովագրողին ներկայացնել սույն Կանոնների 13.1 կետով նախատեսված փաստաթղթերը,
- 10.1.5. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը պարզելու ապահովագրական պատահար դիտարկվող դեպքի պատճառները, ընթացքը և հետևանքները,
- 10.1.6. Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին հնարավորություն տալ անցկացնելու վնասված գույքի զննում, ապահովագրական պատահարի պատճառների հետաքննություն և պատճառված վնասի չափի որոշում,
- 10.1.7. Ապահովագրողի պահանջով իրեն գրավոր ներկայացնել ապահովագրված գույքի վնասման կամ ոչնչացման պատճառները և չափերը պարզելու համար անհրաժեշտ ամբողջ ինֆորմացիան,
- 10.1.8. Ապահովագրական պատահարի ի հայտ գալուց հետո թողնել վնասված գույքը անփոփոխ վիճակում և փոխել ապահովագրական պատահարի պատկերը, միայն եթե դա բխում է անվտանգության նկատառումներով կամ վնասի չափի փոքրացմամբ:
- Ապահովադիրը իրավունք ունի փոխելու ապահովագրական պատահարի պատկերը Ապահովագրողի համաձայնությամբ կամ Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելուց երկու շաբաթյա ժամկետը լրանալուց հետո՝ նախապես ամրագրելով ապահովագրական պատահարի պատկերը տեսախցիկի կամ ֆոտոխցիկի միջոցով:
- 10.2. Ապահովադիրի կողմից վերոնշյալ պարտականություններից որևէ մեկի չկատարումը Ապահովագրողի կողմից դիտվում է որպես ապահովագրության պայմանագրի խախտում և կարող է հանգեցնել ապահովագրական հատուցման մերժման:
- 10.3. Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրը (Շահառուն) խախտել է 10.1.3 կետով սահմանված ժամկետները, եթե Ապահովադիրը (Շահառուն) չի ներկայացնում ուշացման համար հիմնավոր պատճառաբանություն: Գույքի պահպանման կամ վնասի նվազեցմանն ուղղված գործողությունների հետևանքով ժամկետների խախտումը ամեն դեպքում համարվում է հիմնավոր և Ապահովագրողին չի ազատում հատուցման պարտավորությունից:

ԲԱԺԻՆ 11: ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 11.1. Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին նրա կողմից ապահովագրության ընդունվող գույքի նկատմամբ այլ ապահովագրական կազմակերպություններում գործող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին:
- 11.2. Եթե միևնույն ապահովագրության օբյեկտը մի քանի (երկու և ավել) Ապահովագրողների մոտ ապահովագրելու դեպքում ապահովագրական գումարը գերազանցում է ապահովագրված գույքի իրական արժեքը, ապա ապահովագրական հատուցման գումարը կրճատվում է համապատասխան ապահովագրական պատահարի գումարի և բոլոր Ապահովագրողների մոտ ապահովագրվող օբյեկտի ապահովագրության ընդհանուր գումարի հարաբերակցության համամասնությամբ:

ԲԱԺԻՆ 12: ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

- 12.1. Վնասի պատճառները, հանգամանքները և չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ հիմնված Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի կողմից Ապահովադիրի կամ նրա լիազոր անձի ներկայությամբ կազմված զննության ակտի կամ արձանագրության, վնասի չափը հավաստող փաստաթղթերի, ինչպես նաև պատահարի բնույթը սահմանելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի, նյութերի, փորձաքննությունների և նախահաշվային հաշվարկների վրա:

- 12.2. Կողմերի միջև վնասի չափի և պատճառների վերաբերյալ Կողմերի անհամաձայնության դեպքում Կողմերից յուրաքանչյուրը կարող է պահանջել փորձաքննության անցկացում: Փորձաքննությունը անկացվում է դրա պահանջ ներկայացրած Կողմի հաշվին:
- 12.3. Սույն Կանոնների 9.3.9, 10.1.1, 10.1.3 կետերով նախատեսված պարտավորությունների չկատարումը Ապահովագրողին իրավունք է տալիս մերժել ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը իր հերթին իմացել է ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին կամ եթե Ապահովագրողի չտեղեկանալը չէր կարող ազդել ապահովագրական հատուցման իր պարտավորության վրա:
- 12.4. Ապահովագրական հատուցումը վճարվում է.
- 12.4.1. **Գույքի ամբողջական կորստի (ոչնչացման) դեպքում** – ապահովագրական գումարի չափով, ընդ որում Ապահովագրողը իրավունք ունի Ապահովագրից (Շահառուից) ստանալ կորած (ոչնչացած) գույքի կամ դրա մասի նկատմամբ իրավունքները, որի համար ապահովագրական գումարի չափով հատուցում է տրամադրել:
- 12.4.2. **Գույքի մասնակի վնասի դեպքում** – վերականգնողական ծախսերի չափով՝ վերանորոգման ընթացքում փոխարինվող նյութերի, սարքավորումների և պահեստամասերի մաշվածության տոկոսը նվազեցնելով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարն է: Եթե ապահովագրության պայմանագրով սահմանված է հատուցման «Նորը հինի փոխարեն» եղանակը, ապա ապահովագրական հատուցման չափը հաշվարկելիս փոխարինվող դետալների և նյութերի մաշվածությունը հաշվի չի առնվում:
- Գույքի մասնակի վնասի դեպքում ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել լրացուցիչ սահմանաչափեր, այդ թվում ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի կիրառման, մեկ քառակուսի մետրի համար բացարձակ թվով կամ այլ ձևերով:
- 12.5. Կանոնների 3.2.5.5 կետով նախատեսված ծախսերի հատուցումը իրականացվում է վերականգնողական ծախսերի չափով՝ առանց փոխարինման դետալների և նյութերի մաշվածությունը հաշվի առնելու, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարն է:
- 12.6. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, 12.4.2 կետով նշված մաշվածության տարեկան տոկոսի չափը որոշում է Ապահովագրողը՝ կախված գույքի տեսակից և նրա օգտագործման տեխնիկական վիճակից, բայց ամեն դեպքում չի կարող գերազանցել հետևյալ չափերը.
- 12.6.1. Կրող կառույցների համար – 5%,
- 12.6.2. Ներքին հարդարանքի և ճարտարագիտական սարքավորումների համար – 10%,
- 12.6.3. Շարժական գույքի համար – 10%:
- Սույն Կանոնների շրջանակներում ապահովագրվող այլ տեսակի գույքերի համար մաշվածություն չի կիրառվում:
- 12.7. Ապահովագրողը գույքը համարում է ամբողջական կորած (ոչնչացած), եթե համապատասխանում է հետևյալներից որևէ մեկին.
- 12.7.1. Գույքը ամբողջությամբ կորցրել է իր սպառողական որակները և արժեքը, չի կարող օգտագործվել ըստ նշանակության, ինչպես նաև վերանորոգման արդյունքում այն չի կարող բերվել այնպիսի վիճակի, ինչպիսին էր մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը (ներառյալ դեպքերը, երբ գույքի վերականգնումը հնարավոր չի առանց դրա ստորգետնյա հատվածի ամբողջական ապամոնտաժման, բացառությամբ հիմքի),
- 12.7.2. Գույքի վերանորոգման ծախսերը գերազանցում են տվյալ գույքի համար ապահովագրության Պայմանագրում սահմանված ապահովագրական գումարը (այն դեպքում, եթե ապահովագրական գումարը սահմանված է ապահովագրական արժեքի չափով):
- Կողմերի առանձին համաձայնությամբ ապահովագրության Պայմանագրում կարող են նախատեսվել գույքի ամբողջական կորստի (ոչնչացման) այլ պայմաններ, այդ թվում ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով, որի գերազանցման դեպքում տվյալ գույքի վերականգման ծախսերը համարվում են տնտեսապես ոչ նպատակահարմար, գույքը համարվում է կորած (ոչնչացված):
- 12.8. Եթե Կանոնների 12.7 կետի համաձայն գույքը Ապահովագրողի կողմից չի համարվել ամբողջական կորած (ոչնչացված), ապա ապահովագրված գույքը կհամարվի մասնակի վնասված:
- 12.9. Վերականգնողական ծախսերը հաշվարկվում են՝ ելնելով վնասված գույքի վերանորոգման միջին շուկայական գներից՝ վնասի հաշվարկման պահին գույքի գտնվելու տարածաշրջանում: Այն դեպքում, երբ հնարավոր չի հաշվել վնասված կոնկրետ էլեմենտի արժեքը, վերականգնողական ծախսերի հաշվարկը իրականացվում է վնասված էլեմենտի նմանատիպ գույքի արժեքով:
- 12.10. **Վերականգնողական ծախսերը ներառում են.**
- 12.10.1. Վերանորոգման համար նյութերի, պահեստամասերի և սարքավորումների ծախսերը,
- 12.10.2. Վերանորոգման աշխատանքների վարձատրման ծախսերը,
- 12.10.3. Նյութերը վերանորոգման վայր հասցնելու ծախսերը և այլ ծախսեր անհրաժեշտ ապահովագրված գույքի վերականգնման և նախնական տեսքի բերելու համար,
- 12.10.4. Վնասված գույքի վերանորոգման համար դրա հասանելիության համար ծախսեր (ներառյալ պատերի, առաստաղների, հատակի քանդում, և այլն),

12.10.5. Վնասված գույքի՝ վերանորոգման համար պիտանի տեսքի բերելու համար ծախսեր (վնասված նյութերի և սարքավորումների ապամոնտաժում, շինարարական աղբի հավաքում, այդ թվում ապահովագրական տարածքում և տարածքից դուրս վերականգնման աշխատանքների ժամանակ առաջացած աղբի, և այլն)

12.10.6. Կողմերի համաձայնությամբ այլ ծախսեր:

12.11. **Վերականգնողական ծախսերը չեն ներառում.**

12.11.1. Ապահովագրված գույքի փոփոխություններով կամ բարելավումներով պայմանավորված լրացուցիչ ծախսեր,

12.11.2. Ժամանակավոր, օժանդակ վերանորոգման կամ վերականգնման պատճառով կատարված ծախսերը, կատարվող աշխատանքների և նյութերի մատակարարման արագության ծախսերը, բացառությամբ, երբ այդ ծախսերը կատարվել են Ապահովագրողի համաձայնությամբ, կամ նախատեսված են ապահովագրության Պայմանագրով,

12.11.3. Նախագծային փաստաթղթերի կազմման ծախսերը (պլաններ, դիզայն-նախագծեր, և այլն),

12.11.4. Մինչև ապահովագրական պատահարը գույքի վիճակի վերականգնման համար կատարված չփմնավորված կամ ոչ նպատակահարմար ծախսերը,

12.11.5. Կանոնների 12.13.5 կետով նախատեսված ծախսերը,

12.11.6. Ապրանքային արժեքի կորուստը:

12.12. Ապահովագիրը իրավունք ունի Ապահովագրողի օգտին իրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից միայն ապահովագրական պատահարի արդյունքում գույքի ամբողջական կորստի (ոչնչացման) դեպքում: Հազվագյուտ դեպքերում Ապահովագրողի որոշմամբ ապահովագրական հատուցումը վնասված (բայց ոչ կորած/ոչնչացված) գույքի համար կարող է իրականացվել ապահովագրական գումարի չափով:

12.13. Ապահովագրության Պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով լրացուցիչ ծախսերի և ծառայությունների մատուցման ծախսերի հատուցում Ապահովագրողի կողմից, մասնավորապես.

12.13.1. **«Փաստաթղթերի հավաքագրում»** - Ապահովագրողի, կամ նրա հետ պայմանագրային հիմունքներով գործող այլ կազմակերպության/ անձի կողմից տրամադրվող ծառայություն, մասնավորապես՝ ապահովագրական հատուցման որոշման կայացման համար անհրաժեշտ տեղեկանքների, իրավասու մարմիններից, ծառայություններից և կազմակերպություններից այլ փաստաթղթերի հավաքագրում, այդ թվում ապահովագրական պատահարը տեղի ունենալու փաստը հավաստող, տեղի ունեցած պատահարի պատճառների և բնույթի մասին տեղեկատվություն պարունակող, վնասի չափի, մեղավոր անձանց վերաբերյալ փաստաթղթեր (օրինակ՝ ԱԻՆ, Ոստիկանության, այլ մարմիններից փաստաթղթեր և տեղեկանքներ): Փաստաթղթերի հավաքագրման ծածկույթի առկայությունը Ապահովագիրն չի ազատում իր հերթին իրավասու մարմիններ դիմելու և/կամ Ապահովագրողին փաստաթղթերի հավաքագրման համար անհրաժեշտ ներկայացուցիչ տրամադրելու, լիազորագրերի տրամադրման պարտավորությունից (անհրաժեշտության դեպքում):

12.13.2. **«Փաստաթղթերի ստացման համար ծախսեր»** - ծախսերը (տուրքեր, վճարներ, և այլն), որոնք Ապահովագիրը (Շահառուն) կրել է կամ պետք է կրի ապահովագրական հատուցման մասին որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման համար, այն դեպքում, եթե տվյալ փաստաթղթերի տրամադրումը իրավասու մարմինների, կազմակերպությունների կամ ծառայությունների կողմից իրականացվում է վճարովի հիմունքներով: Այսպիսի ծախսերին չեն վերաբերվում փաստաթղթերի արագ ստացման և/կամ միջնորդների կողմից փաստաթղթերի ստացման ծախսերը:

12.13.3. **«Ժամանակավոր բնակություն»** - ծախսերը, որոնք Ապահովագիրը (Շահառուն) կրել է կամ պետք է կրի՝ կապված իր և իր հետ համատեղ բնակվող անձանց բնակության անհնարինության հետ ապահովագրված անշարժ գույքում՝ կապված ապահովագրական պատահարի արդյունքում տեղի ունեցած վնասի հետ: Առանձին կանգնած կառույցների ապահովագրության դեպքում ժամանակավոր բնակության ծախսերը հատուցվում են միայն Ապահովագիր՝ այդպիսի կառույցներում բնակության հասցեով գրանցման դեպքում: Սույն ծածկույթը կարող է գործել միայն բնակելի բնակարանների, տների և առանձնատների համար:

Բնակության անհնարինությունը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով վնասի աստիճանից, չափից, վերականգնման ժամկետներից, և այլն: Ժամանակավոր բնակության ծախսերի հատուցման սահմանաչափը կարող է սահմանվել բացարձակ թվով, ընդհանուր ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսով, ըստ օրի, ըստ անձի, կամ այլ եղանակով:

12.13.4. **«Իրերի ժամանակավոր պահպանություն»** - ծախսերը, որոնք Ապահովագիրը (Շահառուն) կրել է կամ պետք է կրի՝ կապված շարժական և/կամ արժեքավոր գույքի՝ ապահովագրական պատահարի հետևանքով վնասված տարածքում պահելու անհնարինության հետ: Իրերի ժամանակավոր պահպանության ծախսերի հատուցման սահմանաչափը կարող է սահմանվել բացարձակ թվով, ընդհանուր ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսով, ըստ օրի, ըստ անձի, կամ այլ եղանակով:

12.13.5. **«Տարածքի մաքրում»** - ծախսերը, որոնք Ապահովագիրը (Շահառուն) կրել է կամ պետք է կրի՝ կապված ապահովագրական պատահարի հետևանքով տարածքին հասցված վնասի հետևանքով տարածքի մաքրում իրականացնելու անհրաժեշտության հետ (ներառյալ ապահովագրված օբյեկտների վրա ընկած ծառերի (այդ թվում՝ արմատների հեռացում), սյուների կամ ապահովագրված օբյեկտի հողային տարածքից դուրս նման այլ կառույցների, կոնստրուկտիվ տարրերի մասերի հեռացում, ջրհեղեղի արդյունքում մնացած օբյեկտների մաքրում, հողային մակերևույթի

համահարթեցում, տարածքների հողային հատվածի մաքրում՝ վերականգնողական աշխատանքներից հետո, փորձագիտական գործողությունների հետևանքների մաքրում, և այլն), և որոնք ուղղակիորեն կապված չեն վնասված գույքի վերանորոգման կամ վերականգման հետ:

Կանոնների 12.13 կետով սահմանված լրացուցիչ ծախսերի և ծառայությունների ապահովագրական գումարները սահմանվում է Կողմերի համաձայնությամբ և նշվում է ապահովագրության Պայմանագրում:

- 12.14. Ապահովագրողը հատուցում է նաև ապահովագրված գույքի պահպանման/փրկման համար կատարված խելամիտ ծախսերը, եթե այդպիսի ծախսերը եղել են անհրաժեշտ և/կամ ցուցվել են Ապահովագրողի կողմից, եթե նույնիսկ այդպիսի գործողությունները վերջին հաշվով եղել են ապարդյուն: Այդպիսի ծախսերը հատուցվում են համամասնորեն՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերակցությամբ, անկախ նրանից, որ հատուցման ենթակա մյուս վնասների հետ միասին կարող են գերազանցել ապահովագրական գումարը:

ԲԱԺԻՆ 13: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ

- 13.1. Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացվում է սույն Կանոնների 9.1.2 կետով սահմանված ժամկետներում, պայմանով, որ ապահովագրական պատահարի փաստը, դրա պատճառները և հանգամանքները, վնասի չափը պարզված է, և Ապահովագրողը (Շահառուն) Ապահովագրողին ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը կամ կատարել գործողությունները՝

13.1.1. Ապահովագրական պատահարի մասին տեղեկացրել է Ապահովագրողին՝ Կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված ձևով և ժամկետներում,

13.1.2. Ապահովագրական պատահարի մասին դիմում-հայտ՝ Ապահովագրողի կողմից սահմանված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված ձևով կամ եղանակով՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու կամ բացահայտելու ամսաթվից հետո 3 ամսվա ընթացքում: Սույն ժամկետի չափապանման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հայտը՝ ժամկետի ուշացման համար հիմնավոր պատճառաբանություն չստանալու դեպքում:

13.1.3. Ապահովագրողի կողմից ստորագրված ապահովագրական վկայագրի (Պայմանագրի) բնօրինակը, կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ պատճենը կամ լուսապատճենը,

13.1.4. Ապահովագրական հատուցումը ստացող անձի անձնագրի պատճենը,

13.1.5. Ապահովագրված գույքի նկատմամբ իրավունքները (գույքային շահը) հավաստող փաստաթղթեր (օրինակ՝ սեփականության վկայական, գրավի պայմանագիր, վարձակալության պայմանագիր, և այլն),

13.1.6. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը հաստատող և ապահովագրական պատահարի տեղի ունենալու ամսաթվի (ժամկետների), պատճառների, բնույթի, կողմնորոշիչ վնասի չափի և մեղավոր անձանց մասին տեղեկություններ պարունակող տեղեկանք կամ այլ փաստաթուղթ՝ տրամադրված համապատասխան իրավասու մարմնի կողմից (ԱԽ, ՈՍ, այլ իրավասու մարմիններ, այդ թվում՝ արտասահմանյան),

13.1.7. Վնասված գույքի արժեքը հավաստող փաստաթղթերի պատճեններ, այդ թվում՝ չեկեր, հաշիվ-ապրանքագրեր, գույքի գնահատման հաշվետվություն, և այլն, եթե դրանք Ապահովագրողին չեն տրամադրվել Պայմանագրի կնքման ժամանակ,

13.1.8. Վնասված գույքի բնութագրի մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր (այդ թվում՝ սերտիֆիկատներ, փորձագետների վարկավորող կազմակերպությունների եզրակացություններ, նախագծման փաստաթղթեր, օգտագործման նորմատիվային ժամկետների մասին տեղեկանքներ/փաստաթղթեր, և այլն), եթե դրանք Ապահովագրողին չեն տրամադրվել Պայմանագրի կնքման ժամանակ,

13.1.9. Ֆիզիկական անձ Շահառուի դեպքում՝ նոտարով հաստատված լիազորագիր ապահովագրական հատուցման համար, եթե Ապահովագրական հատուցումը ստանալու է Շահառուի ներկայացուցիչը, իսկ Իրավաբանական անձ Շահառուի դեպքում՝ տնօրենի ստորագրությամբ և ընկերության կնիքով հաստատված լիազորագիր:

13.1.10. Սույն Կանոնների և/կամ ապահովագրության Պայմանագրի համաձայն Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա և Ապահովագրողի (Շահառուի) կողմից կատարված կամ կատարվելիք ծախսերի փաստը, նպատակահարմարությունը և չափը հաստատող փաստաթղթեր (այդ թվում՝ անկախ փորձագետի եզրակացություն),

13.1.11. Ապահովագրողի պահանջով՝ վնասի չափը և պատճառը բացահայտող փորձաքննության եզրակացություն:

Փաստաթղթերը Ապահովագրողի համաձայնությամբ կարող են տրամադրվել նաև էլեկտրոնային եղանակով՝ Ապահովագրողի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ տարբեր կրիչներով տրամադրման եղանակով (DVD, CD, հիշողության կրիչ, և այլն):

Փաստաթղթերը պետք է լինեն բացառապես հայերեն լեզվով կազմված կամ թարգմանված: ՀՀ տարածքից դուրս տրամադրված փաստաթղթերը ընդունվում են միայն ՀՀ տարածքում դրանց լեզվախմբության ճանաչման պարագայում (պաշտոնիլային հաստատում, նոտար, և այլն):

Ապահովագրողի որոշմանը սույն կետում թվարկված փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել, եթե դրանք չեն ազդում ռիսկի գնահատման, ապահովագրական պատահարի փաստի հավաստման, ինչպես նաև վնասի չափի և հատուցում ստացող անձի որոշման վրա:

Ապահովագրողը իր հայեցողությամբ իրավասու է առանց լիազորված մարմինների կողմից փաստաթղթերի տրամադրման ապահովագրական հատուցման վճարման մասին որոշում կայացնել, եթե ապահովագրական պատահարի ի հայտ գալու փաստը և դրա հանգամանքները կարող են հաստատվել այլ եղանակով (զննման միջոցով, փորձաքննական եզրակացության և այլն):

Վնասի պատճառները, հանգամանքները և չափը պարզվում են Ապահովագրողի կողմից զննման արդյունքների հիման վրա՝ ներկայացված Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի կողմից Ապահովագրողի կամ նրա լիազորված անձի մասնակցությամբ կազմված ակտում, փաստաթղթերով՝ հավաստող պատճառված վնասների չափը, ինչպես նաև այլ փաստաթղթերով, փորձաքննության նյութերով և այլ հաշվարկներով, որոնց ներկայացման անհրաժեշտությունը որոշվում է դեպքի բնույթով:

13.2. Ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով.

13.2.1. **Դրամական.**

Ա) **Հաշվարկային** – ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի կամ կոմպետենտ կազմակերպության հաշվարկի/փորձագիտական եզրակացության հիման վրա,

Բ) **Փաստացի ծախսերով** – ապահովագրական հատուցման չափը որոշվում է Ապահովագրողի (Շահառուի)՝ գույքի վերականգման և վնասի հետևանքների վերացման համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի հիման վրա:

13.2.2. **Բնաիրային.**

Ա) **Ապահովագրողի կողմից վնասված գույքի վերանորոգման կազմակերպում և/կամ վճարում**՝ Ապահովագրողի հետ համապատասխան պայմանագրի կնքած կազմակերպության միջոցով: Այս դեպքում վերանորոգման համար վճարումը Ապահովագրողը ուղղակիորեն փոխանցում է այդ վերանորոգումը իրականացրած կազմակերպության հաշվեհամարին: Կատարված աշխատանքների ընդունումը Ապահովագրողը (Շահառուն) իրականացնում է ինքնուրույն: Ապահովագրողի և վերանորոգողի միջև վերանորոգման հետ կապված բոլոր անհամաձայնությունները (այդ թվում կապված փոխարինվող մասերի առաքման, աշխատակիցների զբաղվածության ժամկետների հետ կապված), կարգավորվում են Ապահովագրողի կողմից ինքնուրույնաբար:

Բ) **Նմանատիպ գույքի ձեռքբերման ֆինանսավորում** – վնասված/կորած գույքի նման/անալոգային գույքի բնեղեն տրամադրման ձևով: Այս դեպքում վնասի հատուցումը բնաիրային ձևով իրականացվում է վաճառող կազմակերպությանը ուղղակիորեն վճարման եղանակով: Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, վաճառող կազմակերպությանը ընտրում է Ապահովագրողը:

Այն դեպքում, եթե սույն կետով սահմանված հատուցման ձևով ապահովագրական հատուցման դեպքում վաճառողին փոխանցվող գումարը չի հերիքում վնասված/ոչնչացված գույքի նմանատիպ գույք ձեռքբերելու համար, այդ թվում եթե Ապահովագրողը (Շահառուն) ցանկանում է ձեռք բերել այլ գույք (օրինակ՝ ավելի ժամանակակից), որի արժեքը գերազանցում է ապահովագրական հատուցման չափը, Ապահովագրողը (Շահառուն) ավել մասը փոխանցում է ուղիղ վաճառողին՝ համաձայն կնքված պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի: Ապահովագրողի պարտավորությունները համարվում են ամբողջությամբ կատարված՝ վաճառողի հաշվին ապահովագրական հատուցման գումարը մուտք լինելու պահից:

Գ) **Անշարժ գույքի օբյեկտի շինարարության ֆինանսավորում** – ապահովագրական հատուցման փոխարինում վնասված/ոչնչացված գույքի փոխարեն նոր անշարժ գույքի կառուցման ձևով բնեղեն հատուցմամբ: Այս դեպքում վնասի հատուցումը բնեղեն ձևով իրականացվում է կապալառու կազմակերպությանը ուղղակիորեն վճարման եղանակով: Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, վաճառող կազմակերպությանը ընտրում է Ապահովագրողը:

Այն դեպքում, եթե սույն կետով սահմանված հատուցման ձևով ապահովագրական հատուցման դեպքում կապալառուին փոխանցվող գումարը չի հերիքում նոր անշարժ գույքի կառուցման համար, քանի որ նոր անշարժ գույքի կառուցման արժեքը գերազանցում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, այդ թվում եթե գերազանցումը արդյունք է Ապահովագրողի (Շահառուի) նախաձեռնությամբ անշարժ գույքի կոնստրուկտիվ փոփոխությունների (մակերեսի ավելացում և/կամ առաստաղների բարձրություն, այլ նյութերի և/կամ ինժեներական սարքավորումների օգտագործում, և այլն), Ապահովագրողը (Շահառուն) ավել մասը փոխանցում է ուղիղ կապալառուին՝ համաձայն պայմանագրի կամ հաշիվ ապրանքագրի:

Ապահովագրողի և շինարարություն իրականացնող կազմակերպության միջև շինարարական ծառայությունների հետ կապված տարաձայնությունների դեպքում (այդ թվում՝ շինարարության ժամկետների, աշխատակիցների բեռնվածության, և այլն), կարգավորվում են Ապահովագրողի կողմից ինքնուրույն:

Բնեղեն եղանակով ապահովագրական հատուցման դեպքում ապահովագրական հատուցման ժամկետը համապատասխանաբար կարող է երկարաձգվել մինչև նմանատիպ գույքի տրամադրման կամ անշարժ գույքի շինարարության ավարտի ժամկետը:

Ապահովագրված յուրաքանչյուր օբյեկտի համար ապահովագրական Պայմանագրով կամ հատուցման հայտով (եթե հատուցման եղանակի ընտրությունը դրված է Ապահովագրողի վրա) կարող է սահմանվել տարբեր հատուցման եղանակներ:

- 13.3. Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի հատուցման եղանակը ընտրվում է Ապահովագրողի կողմից:
- 13.4. Արտարժույթով կնքված ապահովագրության Պայմանագրով ապահովագրական հատուցման դեպքում հատուցումը իրականացվում է ՀՀ դրամով, բացառությամբ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված դեպքերի, փոխակերպված տվյալ արժույթի ՀՀ ԿԲ փոխարժեքով՝ վճարման հանձնարարականի կամ դրամարկղի օրդերի պատրաստման ամսաթվի դրությամբ:
- 13.5. Ոչ ռեզիդենտների հետ հաշվարկները իրականացվում են ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 13.6. Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի արդյունքում գույքին հասցված վնասի համար ապահովագրական հատուցումը տրվել է դրամական եղանակով, հետագայում այդ վնասի չվերանորոգման, չվերականգման արդյունքում առաջացած վնասները ենթակա չեն հատուցման:

ԲԱԺԻՆ 14: ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 14.1. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ Օրենքով՝ Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում տրամադրելու պարտավորությունից, եթե ապահովագրական պատահարի պատճառ է հանդիսացել.
 - 14.1.1. Միջուկային պայթյունը,
 - 14.1.2. Ռադիացիա կամ ռադիացիոն վարակ,
 - 14.1.3. Պատերազմական գործողություններ, ինչպես նաև զինվորական մանկրներ և այլ գործողություններ,
 - 14.1.4. Քաղաքացիական պատերազմի, ցանկացած տեսակի քաղաքացիական հուզումների կամ գործադուլների,
 - 14.1.5. Պետական մարմինների հրահանգով գույքի վնասման, ոչնչացման, կոնֆիսկացման, բռնագանձման, տարհանման կամ նմանատիպ այլ գործողությունների հետևանքով,
- 14.2. Եթե Ապահովագրողը կամ Ապահովագրողի իմացությամբ գործող անձը մտադրված իրականացնում է գործողություններ կամ այլ զանցանքներ՝ պատճառ դառնալով ապահովագրական պատահարի առաջացմանը, կամ մտադրված գցում է Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին մոլորության մեջ ապահովագրական պատահարի պատճառների կամ վնասի չափերի որոշման ժամանակ, որը հաստատվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման վճարման պարտականությունից:
- 14.3. Ապահովագրողը իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակի մերժել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը (Շահառուն).
 - 14.3.1. Միտումնավոր չի կատարել կամ խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները,
 - 14.3.2. Ապահովագրողին չի տրամադրել սույն Կանոններով նախատեսված և որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, իրերը, կամ տրամադրել է ընդհանուր ընդունված պահանջների և/կամ սույն Կանոններով սահմանված պահանջների խախտմամբ կազմված փաստաթղթեր:
- 14.4. Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պարտավորությունից, եթե Ապահովագրողը (Շահառուն) միտումնավոր չի ձեռնարկել խելամիտ և իրեն հասանելի միջոցներ՝ ապահովագրական պատահարի հետևանքով հնարավոր վնասների նվազեցման համար:
- 14.5. Ապահովագրողը իրավունք չունի մերժել ապահովագրական հատուցումը ՀՀ Օրենսդրությամբ կամ ապահովագրության Պայմանագրով, սույն Կանոններով չնախատեսված հիմքերով:

ԲԱԺԻՆ 15: ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

- 15.1. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարած, հատուցված գումարի սահմաններում, անցնում է պահանջի իրավունքը, որն ունի Ապահովագրողը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:
Ապահովագրողը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, գրավոր հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և իրականացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր գործողությունները իրեն փոխանցված իրավունքների իրացման համար, որն ունի Ապահովագրողը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:

- 15.2. Եթե Ապահովագիրը (Շահառուն) հրաժարվել է այդպիսի իրավունքից կամ այդ իրավունքի իրացումը դարձել է անհնար նրա մեղքով, ապա Ապահովագրողը ազատվում է վերոնշյալ գործողությունների հետևանքով պատճառված վնասի չափով ապահովագրական հատուցման վճարման պարտականությունից, իսկ եթե ապահովագրական հատուցումը արդեն փոխանցվել է, Ապահովագիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել հատուցված գումարը:
- 15.3. Եթե Ապահովագիրը երրորդ անձանցից հատուցում է ստացել, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերությունը: Ապահովագիրը պարտավոր է Ապահովագրողին անմիջապես տեղեկացնել այդպիսի գումարների ստացման մասին:
- 15.4. Ապահովագիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրան համապատասխան մասը), եթե պարզվի հանգամանք, որը օրենքով կամ սույն կանոններով ամբողջությամբ կամ մասնակի զրկում է Ապահովագիրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

ԲԱԺԻՆ 16: ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 16.1. Ապահովագրողը իրավունք ունի պահանջել վճարված հատուցման վերադարձ, եթե ապահովագրական հատուցման վճարումից հետո ի հայտ են գալիս ապահովագրական հատուցման վճարումը մերժելու սույն Կանոններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:
- 16.2. Սույն Կանոնների համաձայն կնքված Պայմանագրերի գործողության ընթացքում կամ հետո Կողմերի միջև ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության (համաձայնության չգալու) դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 17: ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 17.1. Սույն Կանոնների համաձայն Ապահովագրողի կողմից Ապահովագրի (Շահառուի) հասցեին ուղարկված բոլոր ծանուցումները և գրությունները համարվում են պատշաճ ծանուցված, եթե պահպանվել են հետևյալ պայմաններից որևէ մեկը.
- 17.1.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված հասցեով,
- 17.1.2. Ծանուցումը ուղարկվել է SMS հաղորդագրությամբ՝ ապահովագրության Պայմանագրում կամ Ապահովագրի (Շահառուի) և/կամ նրա լիազոր անձի կողմից տրամադրած այլ փաստաթղթի մեջ (հայտային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարով,
- 17.1.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ ապահովագրության Պայմանագրում կամ հայտային դիմումում նշված էլեկտրոնային հասցեով,
- 17.2. Հասցեների և/կամ վերոնշյալ ռեկվիզիտների փոփոխության դեպքում ապահովագիրը (Շահառուն) պարտավոր է այդ մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին ողջամիտ ժամկետում չեն տեղեկացրել հասցեների և/կամ այլ ռեկվիզիտների փոփոխության մասին, ապա Ապահովագիրը (Շահառուն) ուղարկված բոլոր ծանուցումները/գրությունները հին հասցեներով/ռեկվիզիտներով համարվում են պատշաճ ծանուցված այն ամսաթվից, երբ այդ ծանուցումները ստացվել են այդ հասցեներում:
- 17.3. Ապահովագրողն իրավունք ունի միակողմ՝ առանց Ապահովագրի համաձայնության փոփոխություն և/կամ լրացում կատարելու սույն Կանոններում:
- 17.4. Կանոններում փոփոխություն և/կամ լրացում կատարելու դեպքում Ապահովագրողը պարտավոր է ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցել Ապահովագիրին:
- 17.5. Կատարված փոփոխությունների և/կամ լրացումների հետ համաձայն չլինելու դեպքում Ապահովագիրն իրավունք ունի անմիջապես լուծելու ապահովագրության Պայմանագիրը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն՝ Քաղաքացիական Պատասխանատվության Ապահովագրության Լրացուցիչ պայմաններով (այսուհետ՝ Լրացուցիչ պայմաններ) ԷՖԵՍ ԱԲԲԸ-ն կնքում է գույքային շահերի կամավոր ապահովագրության պայմանագրեր՝

կապված ֆիզիկական անձանց գույքին և առողջությանը, իրավաբանական անձանց, մունիցիպալ կառույցների, Հայաստանի Հանրապետության սուբյեկտների կամ Հայաստանի Հանրապետության գույքին հասցված վնասի հատուցման պատասխանատվության դիսկի հետ:

2. Ապահովագրության Պայմանագրով երրորդ անձանց գույքին և առողջությանը պատճառված վնասների հատուցման պատասխանատվության դիսկը կարող է ապահովագրվել ինչպես ի օգուտ Ապահովագրի, այնպես էլ այլ անձանց, ում վրա այդպիսի պատասխանատվություն կարող է դրվել:

Անձինք, ում պատասխանատվությունը ապահովագրվում է ապահովագրության Պայմանագրով (Ապահովագրված անձինք), նշվում են ապահովագրության Պայմանագրում:

Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, սույն Լրացուցիչ պայմանների 4-րդ կետով սահմանված ապահովագրական պատահարների գծով ապահովագրված անձինք են:

- 2.1. Ապահովագրության Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվող գույքի սեփականատերերը, նրանց ընտանիքի անդամները,
 - 2.2. Ապահովագրության Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվող գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման օրինական շահ ունեցող անձինք (ներառյալ վարձակալները և սեփականատերերի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքած անձինք),
 - 2.3. Ապահովագրության Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում սեփականատերերի համաձայնությամբ գտնվող անձինք:
3. Ապահովագրական դիսկ է համարվում ենթադրելի պատահարը, որի տեղի ունենալու համար էլ կնքվում է ապահովագրության Պայմանագիրը:
Ապահովագրական պատահար է համարվում ապահովագրության Պայմանագրով նախատեսված սույն Լրացուցիչ պայմանների 4.1-4.3 կետերում նշված իրադարձություններից մեկի տեղի ունենալը, որի հետևանքով Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում:
Լրացուցիչ պայմանների 4.1-4.3 կետերում նշված յուրաքանչյուր իրադարձություն համարվում է ինքնուրույն: Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքվել դրանցից որևէ մեկի, մի քանիսի, կամ բոլորի համար միասին:
Ապահովագրության Պայմանագրով Կողմերը իրավունք ունեն պայմանավորվել դիտարկել Ապահովագրի պատասխանատվությունը Լրացուցիչ պայմանների 4.1-4.3 կետերում նշված յուրաքանչյուր իրադարձություններից մեկի կամ մի քանիսի համար, այդ թվում ըստ վնասի/գույքի առանձին տեսակի, և այլն:
 4. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահար կարող են համարվել հետևյալ իրադարձությունները.
 - 4.1. Կանոնների 2-րդ բաժնում նշված գույքի (բացառությամբ ինքնագնաց տեխնիկական միջոցների, որոնք ունեն շարժիչ և նախատեսված են տեղափոխման համար (ավտոմեքենաներ, գնացքներ, և այլն)) օգտագործման կամ տիրապետման հետևանքով ապահովագրության Պայմանագրով սահմանված ապագովագրված տարածքում Ապահովագրված անձի ոչ դիտավորյալ մեղավորությամբ ֆիզիկական անձանց գույքին և առողջությանը, իրավաբանական անձանց, մունիցիպալ կառույցների, Հայաստանի Հանրապետության սուբյեկտների կամ Հայաստանի Հանրապետության գույքին հասցված վնասի համար պատասխանատվություն:
 - 4.2. Սույն Լրացուցիչ պայմանների 4.1և 4.3 կետերով նախատեսված դեպքերից այլ, և Լրացուցիչ պայմանների 10-րդ կետով սահմանված դեպքերից չբխող ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրված տարածքում Ապահովագրված անձի ոչ դիտավորյալ մեղավորությամբ ֆիզիկական անձանց գույքին և առողջությանը, իրավաբանական անձանց, մունիցիպալ կառույցների, Հայաստանի Հանրապետության սուբյեկտների կամ Հայաստանի Հանրապետության գույքին հասցված վնասի համար պատասխանատվություն: Ապահովագրության ընդունվող պատասխանատվության կոնկրետ տեսակը նշվում է ապահովագրության Պայմանագրում:
 - 4.3. Ապահովագրված անձանց պատկանող կենդանիների (ներառյալ թռչուններ) ագրեսիվ և/կամ անկանխատեսելի գործողությունների հետևանքով ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրված տարածքում Ապահովագրված անձի ոչ դիտավորյալ մեղավորությամբ ֆիզիկական անձանց գույքին² և առողջությանը, իրավաբանական անձանց, մունիցիպալ կառույցների, Հայաստանի Հանրապետության սուբյեկտների կամ Հայաստանի Հանրապետության գույքին հասցված վնասի համար պատասխանատվություն:
 5. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, սույն Լրացուցիչ պայմաններով ապահովագրության են ենթակա պատասխանատվությունը, կապված.
 - 5.1. Երրորդ անձանց մահվան, աշխատունակության կորստի, վնասվածքների հետ,
 - 5.2. Երրորդ անձանց պատկանող գույքի կորստի կամ վնասի հետ:

² Ներառյալ կենդանիներին, թռչուններին

Վնասի պատճառման փաստը պետք է հավաստվի դատական մարմինների (դատարաններ, արբիտրաժներ, և այլն) ուժի մեջ մտած որոշումով (վճռով) կամ արտադատական կարգով՝ Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հատուցման գույքային հայտի ընդունման միջոցով, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված հաշտության համաձայնագրով:

6. Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքված լինել Լրացուցիչ պայմանների 5-րդ կետում նշված դիսկերից յուրաքանչյուրի համար առանձին կամ ամբողջությամբ:
7. Ապահովագրողի պատասխանատվության սահմաններում ապահովագրության Պայմանագրով լրացուցիչ կարող է նախատեսվել նաև դատական մարմիններում քաղաքացիական պատասխանատվության գործի վարման հետ կապված ծախսերի հատուցման դրույթ, բացառությամբ դատական վճռի կատարման հետ կապված ծախսերի:
Ապահովագրողը հատուցում է նաև ապահովագրական պատահարի հետևանքով երրորդ անձանց գույքին պատճառված վնասի նվազեցման, գույքի փրկման համար կատարված ողջամիտ և անհրաժեշտ ծախսերը:
8. Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով, շինմոնտաժային աշխատանքների հետևանքով առաջացած քաղաքացիական պատասխանատվությունը չի համարվում ապահովագրական պատահար:
9. Ապահովագրական ծածկույթը տարածվում է միայն այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Եթե ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև ապահովագրության սկիզբը առաջացած հանգամանքների հետևանքով, ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման միայն այն դեպքում, եթե Ապահովագրողին կամ Ապահովագրված անձին ոչինչ հայտնի չի եղել և ոչինչ չէր կարող հայտնի լինել այդ ապահովագրական պատահարը առաջացրած հանգամանքների մասին:
10. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրությունը չի տարածվում քաղաքացիական պատասխանատվության վրա, որը կապված է (պատահարները չեն համարվում ապահովագրական պատահարներ).
 - 10.1. Գազերի, գոլորշու, հեղուկի, խոնավության կամ այլ, այդ թվում մթնոլորտային տեղումների (ծովս, փոշի, և այլն) մշտական, ռեգուլյար կամ երկարաժամկետ ազդեցության հետևանքով պատճառված վնասների հետ,
 - 10.2. Տրանսպորտային միջոցների տնօրինման, տիրապետման կամ օգտագործման հետ,
 - 10.3. Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կողմից վարձակալված (վարձույթ, լիզինգ), գրավադրված կամ պահպանության պատասխանատվությանը հանձնված գույքին պատճառված վնասների հետ,
 - 10.4. Պայմանագրի կամ Ապահովագրողի (Ապահովագրված անձի) հետ համաձայնության հիման վրա ծագած ֆինանսական պարտավորությունների հետ, ինչպես նաև վճարումների հետ, որոնք կատարվել են բնեղեն ձևով պարտավորությունների կատարման փոխարեն կամ որպես պատժամիջոցներ, կամ բաց թողնված օգուտի վերաբերյալ պահանջներ:
 - 10.5. Երաշխիքների կամ դրա նման այլ պարտավորությունների կամ երաշխիքի պայմանագրի համաձայն պահանջների հետ,
 - 10.6. Այնպիսի վնասների պահանջների հետ, որոնք գերազանցում են ՀՀ գործող Օրենսդրությամբ սահմանված ծավալները և չափերը (գերազանցող մասով):
 - 10.7. Հեղինակային իրավունքների խախտման, հայտնագործությունների, գիտական աշխատանքների կամ արդյունաբերական նմուշների նկատմամբ իրավունքների, կամ նմանատիպ իրավունքների խախտման հետ, ներառյալ գրանցված առևտրային, ֆիրմային կամ ապրանքային նշանների, տարբերանշանների և անվանումների օգտագործման թույլտվությունների չեղարկումները:
 - 10.8. Բարոյական վնասի, արժանապատվության, արժեքների և աշխատանքային վարկանիշի պաշտպանության հետ,
 - 10.9. Ապահովագրական տարածքից դուրս հասցված վնասների պահանջների հետ,
 - 10.10. Եթե այլ բան նախատեսված չէ՝ միևնույն ապահովագրության պայմանագրով ապահովագրված Ապահովագրողի (Ապահովագրված անձանց)՝ միմյանց դեմ ներկայացված պահանջների հետ
 - 10.11. Պատերազմական գործողությունների, ապստամբությունների, քաղաքացիական հուզումների, զինված խմբավորումների կամ ահաբեկիչների հետևանքով կամ պատճառով առաջացած վնասների հետ,
 - 10.12. Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամկետներում այնպիսի հանգամանքների չվերացման հետ, որոնք ակնհայտորեն բարձրացնում են դիսկի աստիճանը, և որոնց վերացման համար Ապահովագրողը տրամադրել է համապատասխան ցուցումներ:
 - 10.13. Կանոնների 14-րդ Բաժնով սահմանված դեպքերի հետ:
 - 10.14. Ապահովագրողի (ապահովագրված անձի) կողմից ալկոհոլի, թմրամիջոցների, տոքսիկ թունավորման և/կամ Ապահովագրողի (Ապահովագրված անձի)՝ ալկոհոլի, թմրամիջոցների, առանց բժշկի ցուցման հոգեմետ կամ բարձր ազդեցություն ունեցող միջոցների օգտագործման հետևանքով թունավորման հետ:
 - 10.15. Կենդանիների (թռչունների) պահպանման, տնօրինման՝ օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոնների խախտման հետ:

11. Ապահովագրության Պայմանագրով նշված Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը (ապահովագրական գումարը) համարվում է միասնական սահմանաչափ բոլոր տեսակների պատահարների և վնասների համար:
Ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել պատասխանատվության առանձին սահմանաչափեր. Ապահովագրության յուրաքանչյուր դիսկի համար, յուրաքանչյուր պատահարի համար, յուրաքանչյուր տուժողի համար, և այլն:
12. Ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը ապահովագրության ժամկետի ընթացքում տեղի ունեցած բոլոր պատահարների գծով համախառն, չի կարող գերազանցել այդ ժամկետի համար Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը:
13. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը, ի լրումն Կանոնների 10-րդ կետով սահմանված պարտավորություններից, պարտավոր են.
 - 13.1. Անհապաղ, բայց ցանկացած դեպքում ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն հասանելի այնպիսի կապի միջոցներով, որ հնարավոր լինի ֆիքսել տեղեկացման փաստը, տեղեկացնել Ապահովագրողին սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահարի բնույթ ունեցող դեպքի կապակցությամբ իրեն ներկայացվող բոլոր պահանջների վերաբերյալ,
 - 13.2. Ապահովագրողին ցուցաբերել բոլոր հնարավոր աջակցություն կազմակերպելու և իրականացնելու համար արտադատական պաշտպանություն՝ վնասի հատուցման պահանջի ներկայացման դեպքում,
 - 13.3. Այն դեպքում, եթե Ապահովագրողը անհրաժեշտ է համարում նշանակել իր ներկայացուցչին շահերի պաշտպանության նպատակով՝ տրամադրել լիազորագիր և այլ անհրաժեշտ փաստաթղթեր Ապահովագրողի նշանակած անձի կողմից այդպիսի շահերի պաշտպանության համար: Ընդ որում, Ապահովագրողը իրավունք ունի, բայց պարտավոր չէ, իրականացնել Ապահովագրված անձի իրավական պաշտպանություն:
 - 13.4. Ապահովագրողին հասանելի չափով ապահովել Ապահովագրողի մասնակցությունը վնասված գույքի զննմանը և վնասի չափի որոշմանը,
 - 13.5. Ապահովագրողին ներկայացնել իրեն հասանելի ամբողջ տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք հնարավորություն կտան բացահայտելու ապահովագրական պատահարի բնույթը, պատճառները, հետևանքները և վնասի չափը,
 - 13.6. Չիրականացնել հատուցումներ, ամբողջությամբ կամ մասնակի չընդունել մեղավորություն, ինչպես նաև առանց Ապահովագրողի համաձայնության իր վրա չվերցնել ուղղակի կամ անուղղակի պարտավորություններ՝ երրորդ անձանց կողմից ներկայացված պահանջի կարգավորման համար:
14. Ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված՝ վնասների հատուցման չափով, և իրականացվում է ապահովագրական պատահարի փաստի, պատճառների և հանգամանքների պարզելուց և վնասի չափի որոշումից հետո, որոնք կատարվում են իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերի, ինչպես նաև վնասի չափը և պատահարի հանգամանքները հավաստող այլ փաստաթղթերի հիման վրա՝ առանց հաշվի առնելու վնասված գույքի առևտրային արժեքի կորուստը:
15. Այն դեպքում, եթե բացակայում է ապահովագրական պատահար տեղի ունենալու մասին վեճ, տուժողի մոտ առկա է ապահովագրական հատուցման ստացման իրավունք, իսկ Ապահովագրողի (Ապահովագրված անձի) մոտ՝ այն հատուցելու պարտավորություն, առկա է ապահովագրական պատահարի, վնասի և վնասի չափի միջև պատճառահետևանքային կապ, ապա հայտարարված պահանջները բավարարվում են և ապահովագրական հատուցումը վճարվում է արտադատական (կամավոր) կարգով:
16. Ապահովագրական հատուցման արտադատական կարգով վճարման դեպքում վնասի չափի որոշումը և ապահովագրական հատուցման չափը որոշում է Ապահովագրողը՝ հիմք ընդունելով պատահարի փաստերի, պատճառների, հանգամանքների և հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների փաստաթղթերը (բժշկական հաստատություններ, բժշկական-աշխատանքային մասնագիտական խորհուրդներ, սոցիալական ծառայության օրգաններ, և այլն), հաշվի առնելով տեղեկանքները, հաշիվ-ապրանքագրերը, նախահաշիվները և կատարված ծախսերը/անհրաժեշտ կատարվելիք ծախսերը հավաստող այլ փաստաթղթերը:
17. Ապահովագրողը իրավունք ունի Ապահովագրված անձին՝ ներգրավել վնասի չափի որոշման մեջ: Ապահովագրողը իրավունք ունի նաև ներգրավել անկախ փորձագետների՝ սույն Լրացուցիչ պայմաններով նախատեսված իրադարձությունների տեղի ունենալու հետևանքով պատճառված փաստացի վնասի չափի որոշման համար:
18. Ապահովագրական պատահարի պատճառների և հանգամանքների կամ վնասի չափի վերաբերյալ վեճերի առկայության դեպքում ապահովագրական հատուցումը իրականացվում է դատարանի (կամ արբիտրաժի) կողմից օրինական ուժի մեջ մտած որոշման կամ վճռի հիման վրա, կամ Ապահովագրողի համաձայնությամբ և ներկայությամբ ստորագրված հաշտության համաձայնագրի հիման վրա:

19. Ապահովագրության Պայմանագրի կնքման համար Ապահովագրողը կամ նրա ներկայացուցիչը Ապահովագրողի պահանջով, բացի բանավոր կամ գրավոր հայտարարության, ներկայացնում են.
- 19.1. Ապահովագրողի (Ապահովագրված անձի) անձնագրի պատճենը կամ տվյալները,
- 19.2. Այն գույքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթուղթը, որի օգտագործման, տնօրինման, տիրապետական քաղաքացիական պատասխանատվությունը ենթակա է ապահովագրության:
- Ապահովագրողի որոշմամբ վերոնշյալ փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել կամ ընդարձակվել:
20. Ապահովագրական հատուցումը իրականացվում է Ապահովագրողի պահանջով ներկայացվող հետևյալ փաստաթղթերի առկայության դեպքում.
- 20.1. **Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կամ նրա ներկայացուցչի կողմից.**
- 20.1.1. Ապահովագրական պատահարի մասին տեղեկացում Ապահովագրողին՝ Կանոններով և/կամ Պայմանագրով սահմանված ձևով և ժամկետներում,
- 20.1.2. Ապահովագրության Պայմանագրի բնօրինակ,
- 20.1.3. Այն գույքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթուղթը, որի օգտագործման, տնօրինման, տիրապետական քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրվել է,
- 20.1.4. Իրավասու մարմինների տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են երրորդ անձանց վնաս պատճառած ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը (ԱԻՆ, ՈՍ, և այլն), և որոնք թույլ են տալիս դատել պատահարի հանգամանքների, բնույթի և հետևանքների, ինպես նաև վնասի չափի և մեղավոր կողմի մասին,
- 20.1.5. Ապահովագրողի կողմից սույն Լրացուցիչ պայմանների և/կամ ապահովագրության Պայմանագրի համաձայն հատուցման ենթակա Ապահովագրողի (Ապահովագրված անձի) ծախսերի փաստը, չափը և նպատակը հավաստող փաստաթղթեր,
- 20.1.6. Վնաս կրած երրորդ անձի պահանջ (գրավոր հայտ),
- 20.1.7. Դատարանի ուժի մեջ մտած որոշում:
- Ապահովագրողի որոշմամբ սույն թվարկումը կարող է կրճատվել՝ համաձայն սույն Լրացուցիչ պայմաններով նախատեսված դեպքերի:
- 20.2. **Վնաս կրած երրորդ անձանց կամ նրանց ներկայացուցիչների կողմից.**
- 20.2.1. Ապահովագրական պատահարի մասին դիմում-հայտ՝ Ապահովագրողի կողմից սահմանված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված ձևով կամ եղանակով՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու կամ բացահայտելու ամսաթվից հետո 3 ամսվա ընթացքում: Սույն ժամկետի չպահպանման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հայտը՝ ժամկետի ուշացման համար հիմնավոր պատճառաբանություն չստանալու դեպքում:
- 20.2.2. Օրինական ուժի մեջ մտած դատական որոշման (վճռի) վավերացված կրկնօրինակը և կատարման ակտի բնօրինակը (դատական կարգավորման դեպքում, բացառությամբ հաշտության համաձայնագրով կարգավորման դեպքում),
- 20.2.3. Երրորդ անձանց պատճառված վնասի փաստը հավաստող տեղեկանք կամ փաստաթուղթ՝ իրավասու մարմինների կողմից (ԱԻՆ, ՈՍ, և այլն), որոնք հնարավորություն կտան դատել պատահարի բնույթի, հանգամանքների և հետևանքների, վնասի մասշտաբի և մեղավոր կողմերի վերաբերյալ,
- 20.2.4. Վնասված գույքի կամ տարածքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթեր,
- 20.2.5. Վնասված գույքի արժեքը հավաստող փաստաթղթեր (այդ թվում՝ չեկեր, գնահատման հաշվետվություններ, ինվոյսներ, և այլն),
- 20.2.6. Վնասված գույքի բնութագրի մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր (սերտիֆիկատներ, փորձագիտական եզրակացություններ, նախագծային փաստաթղթեր, և այլն),
- 20.2.7. Վնաս կրած երրորդ անձի ներկայացուցչի կողմից ապահովագրական հատուցումը ստանալու դեպքում՝ նոտարով հաստատված լիազորագիր,
- 20.2.8. Ապահովագրողի կողմից սույն Լրացուցիչ Կանոնների և/կամ ապահովագրության պայմանագրի համաձայն հատուցման ենթակա՝ վնաս կրած երրորդ անձանց կողմից կատարված ծախսերի կատարման փաստը, չափը և նպատակը հավաստող փաստաթղթեր,
- 20.2.9. Անձինք, ովքեր ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով կամ այլ իրավական ակտերով տուժողի (կերակրողի) մահվան դեպքում հատուցման իրավունք ունեն, ներկայացնում են.
- Ա) Մահացած տուժողի ընտանիքի անդամների մասին տեղեկատվություն պարունակող *Դիմում* նշելով անձանց, ովքեր գտնվել են տուժողի խնամակալության ներքո և ունեն իրավահաջորդության իրավունք,
- Բ) Մահվան վկայականի կրկնօրինակ,

- Գ) Երեխայի ծննդյան վկայական, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին մահացած անձի խնամակալության ներքո գտնվել են անչափահաս երեխաներ,
- Դ) Հաշմանդամության կարգը հավաստող փաստաթուղթ, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին մահացած անձի խնամակալության ներքո գտնվել են հաշմանդամներ,
- Ե) Կրթական հաստատությունից տեղեկանք այն մասին, որ մահացածի ընտանիքի անդամը, ով ունի հատուցումը ստանալու իրավունք, սովորում է այդ կրթական հաստատությունում, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին մահացած անձի խնամակալության ներքո գտնվել են կրթական հաստատություններում սովորող անձինք,
- Ձ) Կողմնակի անձի խնամքի վերաբերյալ տեղեկանք (բուժհաստատության, սոցիալական ծառայության կողմից տեղեկանք), եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին մահացած անձի խնամակալության ներքո գտնվել են կողմնակի անձի խնամքի կարիք ունեցող անձինք,
- Է) Սոցիալական ծառայության տեղեկանք (բժշկական հաստատության, տեղական ինքնակառավարման մարմնի, զբաղվածության ծառայության) այն մասին, որ մահացած անձի ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի այլ անդամը չի աշխատում և զբաղված է նրա հարազատների խնամքով, եթե ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին մահացած անձի խնամակալության ներքո գտնվել են նրա հարազատների խնամքով զբաղված չաշխատող ընտանիքի անդամներ:
- 20.2.10. Անձինք, ովքեր կրել են մահացած անձի թաղման համար անհրաժեշտ ծախսեր, հայտ ներկայացնելու դեպքում ներկայացնում են նաև.
- Ա) Մահվան վկայական,
- Բ) Թաղման համար անհրաժեշտ ծախսերը հավաստող փաստաթղթեր:
- 20.2.11. Տուժողի կողմից ապահովագրական պատահարի արդյունքում մասնագիտական կամ ընդհանուր աշխատունակության կորստի հետևանքով եկամտի կորստի համար, պահանջի ներկայացման դեպքում ներկայացնում է.
- Ա) Համապատասխան բժշկական հաստատության կողմից տեղեկանք՝ տուժողի վնասվածքների բնույթի, դիագնոզի, անաշխատունակության ժամկետների վերաբերյալ,
- Բ) ՀՀ Օրենսդրությամբ սահմանված անաշխատունակության թերթիկի կրկնօրինակը,
- Գ) Ապահովագրական պատահարի տեղի ունենալու ամսաթվի դրությամբ տուժողի ամսական միջին եկամտի, կրթաթոշակի, նպաստի մասին տեղեկանք կամ այլ փաստաթուղթ,
- 20.2.12. Տուժողը՝ ապահովագրական պատահարի արդյունքում առողջության վնասների համար լրացուցիչ ծախսերի, բուժման և դեղորայքի համար (որոնց համար տուժողը պետ.պատվերի շրջանակներում չի ստանում բուժօգնություն) ներկայացնում է.
- Ա) Բժշկական հաստատության կողմից տրամադրված հիվանդության պատմության քաղվածք,
- Բ) Բժշկական հաստատության ծառայությունների համար կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր,
- Գ) Դեղորայքների ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:
- 20.2.13. Տուժողը ապահովագրական պատահարի արդյունքում առողջության վնասների համար լրացուցիչ ծախսերի դեպքում (բացի բուժման և դեղորայքի ծախսերից), ներկայացնում է ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով Բժշկական եզրակացություն, բժշկա-սոցիալական եզրակացություն կամ դատաբժշկական փորձաքննության եզրակացություն՝ լրացուցիչ սնունդի, պրոթեզավորման, կողմնակի անձի խնամքի, սանատորիական բուժման, հատուկ տրանսպորտային միջոցների, այլ մասնագիտության հմտությունների ձեռքբերման անհրաժեշտության վերաբերյալ, այն դեպքում, եթե այդպիսի ծառայությունների անվճար ստացման համար տուժողը իրավունք չունի: Սույն կետի համաձայն ներկայացվում է նաև 20.2.14 – 20.2.19 կետերով սահմանված փաստաթղթերը:
- 20.2.14. Լրացուցիչ սնունդի համար անհրաժեշտ ծախսերի հատուցման պահանջի դեպքում ներկայացվում են.
- Ա) Տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմիններից կամ այլ իրավասու մարմիններից՝ տվյալ համայնքում տվյալ սնունդի միջին շուկայական արժեքների վերաբերյալ,
- Բ) Տեղեկանք բժշկական հաստատությունից տուժողի համար անհրաժեշտ լրացուցիչ սնունդի բաղադրության վերաբերյալ,
- Գ) Լրացուցիչ սնունդի ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր (ՀԴՄ-ներ, ինվոյսներ, և այլն):
- 20.2.15. Պրոթեզավորման համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու պահանջի դեպքում՝ պրոթեզավորման ծառայությունների ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:

- 20.2.16. Կողմնակի խնամքի համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու պահանջի դեպքում՝ կողմնակի խնամքի ծառայությունների ձեռքբերումը հավաստող փաստաթղթեր:
- 20.2.17. Սանատորիական բուժման համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու պահանջի դեպքում.
Ա) Այն սանատորիական բժշկական հաստատության կողմից տրամադրված բժշկական պատմությունից քաղվածք, որտեղ իրականացվել է բուժումը,
Բ) Սանատորիական ուղեգիր կամ այլ փաստաթուղթ, որը հավաստում է սանատորիական բուժման անցկացումը,
Գ) Սանատորիական բուժման ծախսը հավաստող փաստաթղթեր:
- 20.2.18. Հատուկ տրանսպորտային միջոցների համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու պահանջի դեպքում.
Ա) Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի կրկնօրինակը,
Բ) Հատուկ տրանսպորտային միջոցի ձեռքբերումը կամ այդպիսի ծառայությունը հավաստող փաստաթղթեր,
Գ) Ձեռքբերման պայմանագրի կրկնօրինակ:
- 20.2.19. Այլ մասնագիտության հմտությունների ձեռքբերման համար անհրաժեշտ ծախսերը հատուցելու պահանջի դեպքում.
Ա) Մասնագիտական դասընթացի (վերապատրաստման) վճարման հաշիվ,
Բ) Մասնագիտական դասընթացը (վերապատրաստումը) իրականացնող հաստատության հետ պայմանագրի կրկնօրինակ,
Գ) Վճարումը հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերը Ապահովագրողի համաձայնությամբ կարող են տրամադրվել նաև էլեկտրոնային եղանակով՝ Ապահովագրողի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկման միջոցով, կամ տարբեր կրիչներով տրամադրման եղանակով (DVD, CD, հիշողության կրիչ, և այլն):

Փաստաթղթերը պետք է լինեն բացառապես հայերեն լեզվով կազմված կամ թարգմանված: ՀՀ տարածքից դուրս տրամադրված փաստաթղթերը ընդունվում են միայն ՀՀ տարածքում դրանց լեզվափոխության ճանաչման պարագայում (ապոստիլային հաստատում, նոտար, և այլն):

Ապահովագրողի որոշմանը սույն կետում թվարկված փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել, եթե դրանք չեն ազդում ռիսկի գնահատման, ապահովագրական պատահարի փաստի հավաստման, ինչպես նաև վնասի չափի և հատուցում ստացող անձի որոշման վրա:

21. Ապահովագրական հատուցման գումարի մեջ ներառվում են.

21.1. Ֆիզիկական անձանց կյանքին կամ առողջությանը հասցված վնասների դեպքում.

- 21.1.1. Առողջությանը պատճառված վնասվածքի կամ այլ վնասի հետևանքով աշխատունակության կորստի կամ նվազեցման պատճառով կորցրած եկամուտը,
21.1.2. Առողջության վերականգման համար անհրաժեշտ ծախսերը (բուժման և դեղորայքի) և լրացուցիչ ծախսերը (լրացուցիչ սնունդ, սանատորիական բուժում, կողմնակի խնամք, պրոթեզավորում, և այլն),
21.1.3. Եկամտի այն մասը, որը տուժածի մահվան դեպքում կորցրել է նրա խնամակալության տակ գտնվող անաշխատունակ անձը, կամ անձինք, ովքեր ունեն ժառանգություն ստանալու իրավունք,
21.1.4. Թաղման համար անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,
21.1.5. Ապահովագրողի հետ համաձայնեցված ծախսերը՝ Ապահովագրողի (Ապահովագրված անձի) մեղավորության աստիճանի, պատահարի հանգամանքների և վնասի չափի նախնական բացահայտման նպատակով:

21.2. Գույքային վնասների դեպքում.

- 21.2.1. Ուղիղ իրական վնաս՝ գույքի վնասի կամ կորստի ձևով, որը որոշվում է.
Ա) Գույքի ամբողջական կորստի դեպքում – դրա իրական արժեքի չափով՝ հանելով մաշվածությունը և գույքի մնացորդային արժեքը, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը,
Բ) գույքի մասնակի վնասի դեպքում – վերականգման ծախսերի չափով՝ հանելով վերանորոգման ընթացքում փոխարինված նյութերի, սարքավորումների և պահեստամասերի մաշվածության տոկոսը, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրով սահմանված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը:
21.2.2. Ապահովագրողի հետ համաձայնեցված ծախսերը՝ Ապահովագրողի (Ապահովագրված անձի) մեղավորության աստիճանի, պատահարի հանգամանքների և վնասի չափի նախնական բացահայտման նպատակով:

- 21.2.3. Վնաս կրող անձանց գույքի պահպանման համար կատարված ողջամիտ և անհրաժեշտ ծախսերը, կամ ապահովագրական պատահարի հետևանքով գույքին հասցված վնասի նվազեցմանը ուղղված ծախսերը:
- Եթե ծախսերը եղել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումով, ապա Ապահովագրողի կողմից ենթակա են հատուցման, նույնիսկ եթե գույքի պահպանման համար ձեռնարկված միջոցները եղել են ապարդյուն: Այդպիսի ծախսերը հատուցվում են պատասխանատվության սահմանաչափի և վնասված գույքի իրական արժեքի համամասնությամբ, անկախ նրանից, որ հատուցման ենթակա մյուս վնասների հետ միասին կարող են գերազանցել պատասխանատվության սահմանաչափը:
22. Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությամբ ապահովագրական հատուցումը ուղղակիորեն իրականացվում է վնաս կրած անձանց՝ համաձայն վերջիններիս կողմից ներկայացված դիմումի, պահանջների և հատուցման ստացման եղանակի: Ապահովագրողը իրավունք ունի հատուցել այն անձին, ում պատասխանատվությունը ապահովագրված է, օրինական ուժի մեջ մտած դատական վճռի համար կատարված ծախսերի համար՝ Պայմանագրով սահմանված չափով կամ սահմանաչափի սահմաններում:
23. Ապահովագրողը իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե տեղի է ունեցել.
- 23.1. Ապահովագրողի (Ապահովագրված անձի) կամ վնաս կրած երրորդ անձանց դիտավորյալ գործողություններ՝ միտված ապահովագրական պատահարի տեղի ունենալուն, բացառությամբ երրորդ անձանց կյանքին և առողջությանը պատճառված վնասների: Վերջիններիս դեպքում Ապահովագրողը իրավունք ունի կիրառել հետադարձ պահանջի իրավունք՝ մեղավոր անձի նկատմամբ, հատուցված վնասի չափով:
- 23.2. Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու ժամկետների խախտում կամ վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթերի չներկայացումը, եթե դա ազդել է ապահովագրական հատուցման վճարման Ապահովագրողի պարտավորության վրա:
- 23.3. Դիտավորյալ անգործություն, որի արդյունքում չեն ձեռնարկվել վնասի նվազեցման համար ողջամիտ և հասանելի միջոցներ:
24. Սույն Լրացուցիչ Պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են ապահովագրության Կանոնները:
25. Սույն Լրացուցիչ պայմանների և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է սույն Լրացուցիչ պայմաններին:

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Հողամասերի ապահովագրության Լրացուցիչ պայմանների» համաձայն (այսուհետ – Լրացուցիչ պայմաններ) էֆես ԱՓԲԸ-ն կնքում է հողային տարածքների՝ օգտագործման համար անպիտան դառնալուց կամավոր ապահովագրության պայմանագրեր (ոհսկ՝ «Հողամասի անպիտանելիություն»):
Սույն Լրացուցիչ պայմաններում բացակայող տերմինների մեկնաբանությունը իրականացվում է ապահովագրության Կանոնների համաձայն:
2. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն կարող են ապահովագրվել միայն հողամասերը, որոնք պատկանում են Ապահովագրին (Շահառուին):
3. «Հողամասի անպիտանելիություն» ոհսկով Ապահովագրական պատահար են համարվում հողային տարածքի աղտոտումը, հողատարումը, կեղտակալումը, այդ թվում հողի բերքատու շերտի վնասումը նավթամթերքով, ինչպես նաև հողամասերի նպատակային օգտագործման համար ոչ պիտանի վիճակ առաջացնող վնասման այլ ձևեր, այդ թվում դեգրադացիա, որոնք առաջացել են.
 - 3.1 Կրակի, ջրի կամ այլ հեղուկի, պայթյունի հետևանքով:
 - 3.2 Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրության Կանոններով նախատեսված Գույքի պահպանման համար անցկացվող միջոցառումներ հետևանքով.
 - 3.3 Տիեզերական օբյեկտների վայր ընկնելու հետևանքով (երկնաքարերի, կոմետաների, աստերոիդների և այլն) կառավարվող և անօդաչու թռչող ապարատների (այդ թվում նաև տիեզերական) կամ դրանց մասնիկների, բեռների և այլ առարկաների ընկնելը տվյալ թռչող ապարատներից, ինչպես նաև օդային հարվածային ալիքի ազդեցությունը ապահովագրված գույքի վրա, որը ձևավորվել է դրան ընկնելու հետևանքով:
 - 3.4 Երրորդ անձանց կողմից հողամասերի փչացման հետևանքով.
 - 3.5 երկրաշարժի, ուժգին քամու, հողմի, փոթորիկի, մրրիկի, կայծակի հարվածի, տորնադոյի, հողմապտույտի, հրաբխի ժայթքման կամ ստորգետնյա բնական կրակի ներգործության, սողանքի, հեղեղի կամ լեռնային փլուզման, ջրհեղեղի, հեղեղի, կամ այլ ջրային ռեժիմների, պայմանով, որ այդպիսի ջրային ռեժիմի փաստը հաստատված է իրավասու մարմինների կողմից (ԱԻՆ կամ այլ իրավասու մարմիններ), այլ բնական երևույթներ, այդ թվում՝ մթնոլորտային տեղումների (կարկուտ, տեղատարափ անձրև, ձյուն), եթե դրանք Ազգային օդերևութաբանական ծառայության մարմնի կամ ԱԻՆ կողմից ճանաչվել են որպես վտանգավոր բնական երևույթներ կամ արտակարգ դեպքեր (այդ թվում տվյալ տեղանքի համար անոմալ մթնոլորտային տեղումներ՝ սելավ, ձյուն, և այլն): Վթարներ, որոնք առաջացել են վառելիքի կամ այլ քիմիական նյութերի տեղափոխման ժամանակ, հանգեցնելով ապահովագրական պատահարի:
 - 3.6 Վառելիքի կամ այլ քիմիական նյութերի տեղափոխման ընթացքում վթարների հետևանքով, որոնք իրենց հերթին պատճառ են հանդիսացել ապահովագրական պատահարի տեղի ունենալու համար:
4. «Հողամասի անպիտանելիություն» ոհսկով Ապահովագրական պատահար չեն համարվում ապահովագրված հողային տարածքի աղտոտումը այլ պատճառներից, որոնք նշված են սույն Լրացուցիչ պայմանների 3-րդ կետում, այդ թվում առաջացել են բնության բնական պրոցեսով, չունենալով տարերային, անկանխատեսելի, հանկարծակի բնույթ, ինչպես նաև առաջացել են Ապահովագրի (Շահառուի) կամ նրա ներկայացուցչի ներգործությամբ:
5. «Հողամասի անպիտանելիություն» ոհսկի ապահովագրական գումարը սահմանվում է հողամասի ապահովագրական արժեքի սահմանում, որը որոշվում է համաձայն ապահովագրության Կանոնների 4.4 ենթակետի:
6. Ապահովագրության պայմանագրով կարող են սահմանված լինել Ապահովագրի պատասխանատվության առանձին սահմանաչափեր հողամասերի վնասման տարբեր տեսակների համար (այդ թվում՝ յուրաքանչյուր պատահարի համար, Լրացուցիչ պայմանների 3-րդ կետի յուրաքանչյուր վնասի համար, և այլն):
7. «Հողամասի անպիտանելիություն» ոհսկի գծով Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը ապահովագրական գումարի սահմաններում հատուցում է ախտահանման ծախսերը, ապահովագրված հողամասի մաքրման աշխատանքները, ողջամիտ ծախսերը, որոնց արդյունքում հողամասը կբերվի նպատակային օգտագործման համար պիտանի վիճակի, ինչպես նաև ապահովագրության Կանոնների 12.14 ենթակետով սահմանված ծախսերը:
8. Ապահովագրական հատուցման որոշում կայացնելու համար, ի լրումն ապահովագրության Կանոնների 13.1 ենթակետում նշված փաստաթղթերի, Ապահովագիրը (Շահառուն) Ապահովագրողի պահանջով ներկայացնում է նաև հետևյալ փաստաթղթերը.
 - 8.1 Փաստաթղթեր պետական սանիտարահամաճարակաբանական վերահսկողության մարմնից, ոստիկանությունից կամ այլ իրավասու մարմիններից, որոնք պարունակում են տեղեկատվություն աղտոտվածության, դեգրադացման, հողատարության փաստի վերաբերյալ կամ նպատակային օգտագործման համար ոչ պիտանի այլ վիճակի մասին:
 - 8.2 Հասցված վնասի գումարային չափը հաստատող փաստաթուղթ:
 - 8.3 Հողամասի բնութագրերը հստակեցնող փաստաթղթեր (անկախ փորձագետի կողմից փորձաքննության եզրակացություններ հողային տարածքի վիճակի մասին):Ապահովագրողի որոշմամբ սույն ցուցակը կարող է կրճատվել:

9. Եթե ապահովագրված հողամասի վնասի դեպքում ըստ նպատակի օգտագործման համար պիտանի վիճակի հասցնելու համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական գումարը, կամ հողամասի կոնսերվացման դեպքում, ինչպես նաև այնպիսի վիճակի դեպքում, երբ հողամասը 3 տարի շարունակ անհնար է օգտագործել ըստ նշանակության, հողամասը համարվում է ամբողջական ոչնչացված/վնասված, և Ապահովագրողը հատուցում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրվա դրությամբ դրա միջին շուկայական արժեքի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարն է:
10. Սույն Լրացուցիչ Պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են ապահովագրության Կանոնները:
11. Սույն Լրացուցիչ պայմանների և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է սույն Լրացուցիչ պայմաններին:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Ճարտարագիտական համակարգերի խափանման հետևանքով առաջացած վնասի ապահովագրության Լրացուցիչ պայմանների» համաձայն (այսուհետ՝ Լրացուցիչ պայմաններ) ԷՖԵՍ ԱՓԲԸ-ն կնքում է ջրատար ճարտարագիտական համակարգերի (ջրատար, ջեռուցման, կոյուղու, հակահրդեհային համակարգերի) անկանխատեսելի վնասներից կամավոր ապահովագրության պայմանագրեր (նիսկը՝ «**Ճարտարագիտական համակարգերի խափանում**»): Սույն Լրացուցիչ Պայմաններում բացակայող տերմինների մեկնաբանությունը իրականացվում է ապահովագրության Կանոնների համաձայն:
2. «Ճարտարագիտական համակարգերի խափանում» ռիսկից ապահովագրությունը իրականացվում է միայն ապահովագրության Կանոնների 2.4.2, 2.4.3 ենթակետերում նշված գույքի համար:
3. «Ճարտարագիտական համակարգերի խափանում» ռիսկով ապահովագրական պատահար է համարվում.
 - 3.1. «Ցածր ջերմաստիճանի ազդեցություն» - ապահովագրված ճարտարագիտական համակարգերի հանկարծակի վնաս ցածր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով, եթե դրանք չեն համարվել վտանգավոր բնության երևույթ ՀՀ Հիդրոմետ ծառայության, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմնի կողմից: Ճարտարագիտական համակարգերի խափանման հետևանքով հասցված վնասը այնպիսի ցածր ջերմաստիճանի ազդեցության պատճառով, որը համարվել է վտանգավոր բնության երևույթ ՀՀ Հիդրոմետ ծառայության, ԱԻՆ կամ այլ իրավասու մարմնի կողմից, ենթակա է հատուցման «Տարերային աղետ» ռիսկի ներքո (համաձայն սույն Կանոնների 3.2.7 ենթակետի):
 - 3.2. «Հեղուկի ազդեցություն» - սույն Կանոնների համաձայն Ապահովագրված գույքին հասցված վնաս դրա վրա հեղուկի կամ ջրի ազդեցության հետևանքով, որը առաջացել է ճարտարագիտական համակարգերի սառեցման և ապասառեցման հետևանքով:
4. Եթե ապահովագրության պայմանագրում կա նշում, ապա ապահովագրական պատահար է համարվում նաև ապահովագրված ջրատար ճարտարագիտական համակարգերի (այդ թվում՝ փականներ, խողովակներ, մարտկոցներ, գոլիչներ և այլ մաքրող սարքավորումներ, սենսորներ, պոմպեր, կաթսաներ, ջրատաքացուցիչներ, և այլն) վնասը ներքին ազդեցությունների հետևանքով, այդ թվում ջեռուցման և/կամ ջրամատակարարման հակակարգերում ճնշման անկման արդյունքում (ՌԻՍԿ՝ «**Ներքին ազդեցություն**»): Սույն կետի համաձայն հատուցվում է հենց ապահովագրված ճարտարագիտական համակարգին հասցված վնասը: Սույն կետով նկարագրված ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված այլ գույքի վնասը հեղուկի կամ ջրի արդյունքում ենթակա է հատուցման ապահովագրության կանոնների «Վնասվածք ջրից» ռիսկի ներքո:
5. «Ճարտարագիտական համակարգերի խափանում» ռիսկով տեղի ունեցած ապահովագրական պատահարի ժամանակ Ապահովագրողը հատուցում է ապահովագրական գումարի սահմաններում.
 - 5.1. Ջրատար համակարգերի հանկարծակի խափանումների վերացման ծախսերը (այդ թվում խողովակների և դրանց հետ ուղղակիորեն կապված սարքավորումների փոխարինման ծախսերը),
 - 5.2. Ճարտարագիտական համակարգերի ապասառեցման ծախսերը,
 - 5.3. Վնասված ապահովագրված գույքը մինչև սույն Լրացուցիչ պայմաններով սահմանված ապահովագրական պատահարի ի հայտ գալու վիճակին բերելու համար անհրաժեշտ ծախսերը՝ համաձայն ապահովագրության Կանոնների 12-րդ Բաժնի:
6. «Ճարտարագիտական համակարգերի խափանում» ռիսկով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում

հատուցվում է նաև սույն Կանոնների 12.14 ենթակետում նախատեսված ծախսերը:

7. Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա հատուցման ենթակա չեն այն խողովակների կամ ջրատար, ջեռուցման, կոյուղու կամ հակահրդեհային համակարգի այլ մասերի վերանորոգման, փոխարինման կամ ապաստանեցման ծախսերը, որոնք գտնվում են ապահովագրված շինություններից կամ տարածքներից դուրս, ինչպես նաև տեղադրված են հիմքից կամ նկուղի հատակից ներքև:
8. Ապահովագրական ծածկույթ չի տրամադրվում.
 - 8.1. Սույն Լրացուցիչ պայմանների 1-ին կետով նշված ճարտարագիտական համակարգերի, այդ թվում այդ համակարգերում օգտագործվող փականների, ծորակների, խողովակների, ռադիատորների, ջրացուցիչների, ֆիլտրների և այլ մաքրող սարքերի, կլապանների, ազդակների, պոմպերի, կաթսաների, ջրատաքացուցիչների և այլ սարքավորումների ու մասերի բնական մաշվածության, կոռոզիայի կամ ժանգոտվածության հետևանքով պատճառված վնասներ,
 - 8.2. Զեռուցման և ջրամատակարարման համակարգերում ճնշման անկման հետևանքով պատճառված վնասներ, եթե ճնշման անկումը առաջացել է Ապահովագրի (Ապահովագրված անձի), նրանց ընտանիքի անդամների կամ Ապահովագրի (Ապահովագրված անձի) համաձայնությամբ գործող անձանց կողմից ջեռուցման և ջրամատակարարման սխալ շահագործման արդյունքում:
 - 8.3. Անուղղակի վնասներ, ինչպիսիք են բաց թողնված եկամուտ և/կամ շահույթի կորուստ, ջրի, գոլորշու, ջերմության կորստի հետևանքով վնասներ,
 - 8.4. Բարոյական վնասը,
 - 8.5. Ընթացիկ նյութերի (փամփուշտներ, մաքրող փամփուշտներ, ֆիլտրեր, և այլն), փականների գլխիկների, տաքացնող տեների, պոմպերի շարժիչների, ճնշման ռելեների, մանոմետրերի փոխարինման հետ կապված ծախսերը,
 - 8.6. Էլեկտրասնուցման համակարգում լարման տատանման կամ էլեկտրականության անջատման հետևանքով առաջացած վնասները: Այդ վնասները ենթակա են հատուցման «Լարման տատանում» դիսկի ներքո (համաձայն «Էլեկտրասնուցման համակարգում լարման տատանման կամ էլեկտրականության անջատման հետևանքով պատճառված վնասների» ապահովագրության Լրացուցիչ պայմանների),
 - 8.7. Ճարտարագիտական սարքավորումների անորակ մոնտաժման և/կամ անորակ նյութերի, դետալների հետևանքով հասցված վնասներ,
 - 8.8. Ճարտարագիտական համակարգերի վնասներ, որոնք չեն առաջացել սույն Լրացուցիչ պայմանների 3-րդ կետով սահմանված դիսկերից, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով:
9. «Ճարտարագիտական համակարգերի խափանում» դիսկի ներքո ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել ապահովագրական հատուցման սահմանաչափեր յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար և/կամ յուրաքանչյուր դիսկի համար, տոկոսային կամ դրամական արտահայտությամբ:
10. Սույն Լրացուցիչ Պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են ապահովագրության Կանոնները:
11. Սույն Լրացուցիչ պայմանների և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է սույն Լրացուցիչ պայմանների:

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳԾՈՒՄ ՀՈՍԱՆՔԻ ԼԱՐՄԱՆ ՏԱՏԱՆՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՋԱՏՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «Էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման հետևանքով առաջացած վնասի ապահովագրության Լրացուցիչ պայմանների» համաձայն (այսուհետ՝ Լրացուցիչ պայմաններ) ԷՖԵՍ ԱԲԲԸ-ն կնքում է Էլեկտրամատակարարման գծում հոսանքի լարման տատանման, էլեկտրականության անջատման հետևանքով գույքին հասցված վնասի կամավոր ապահովագրության պայմանագրեր:
Սույն Լրացուցիչ Պայմաններում բացակայող տերմինների մեկնաբանությունը իրականացվում է ապահովագրության Կանոնների համաձայն:
2. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրության են ենթակա միայն առանձին ցանկով սահմանված գույքերը, որը կցվում է ապահովագրության Պայմանագրին, կամ ներառված է հենց Պայմանագրի մեջ: Գույքը, որը հատուկ թվարկված չէ, ենթակա չէ ապահովագրության:
3. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն ապահովագրական պատահար է համարվում ապահովագրական Պայմանագրին կից կամ Պայմանագրում թվարկված գույքի վնասը, կորուստը կամ ոչնչացումը էլեկտրական ցանցում հոսանքի լարման տատանման կամ էլեկտրականության անջատման հետևանքով (այսուհետ՝ «Հոսանքի տատանում»):
4. Սույն Լրացուցիչ պայմաններով ապահովագրական չեն համարվում պատահարները, որոնք կապված են.
 - 4.1. Այնպիսի կողմի գործողությունների հետ, որը չի հանդիսանում էլեկտրականության մատակարար կազմակերպություն կամ էլեկտրական հոսանքի սպառող (իրդեհ, պայթյուն, պատերազմական գործողություններ, և այլն):
 - 4.2. Պետական կառավարման մարմինների կողմից կարգավորվող պայմաններից, ինչպես նաև կապված բացառապես բնական երևույթների և անկանխատեսելի հանգամանքների արդյունքում առաջացած հետևանքների վերացման հետ:
 - 4.3. Հրդեհի հետ (սույն դիսկը ենթակա է հատուցման համաձայն Կանոնների 3.2.1 կետի՝ «Հրդեհ»):
 - 4.4. Ապահովագրի (Շահառուի), նրա ընտանիքի անդամների կամ Ապահովագրի (Շահառուի) համաձայնությամբ գործող անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ կամ իրավական ակտերով կամ նորմերով սահմանված շինմոնտաժային աշխատանքների, հրդեհային անվտանգության կանոնների, ջրատար, կոյուղու, ջեռուցման և հակահրդեհային համակարգերի օգտագործման կանոնների, տարածքների օգտագործման և/կամ պահպանման կանոնների, գույքի պահպանման նորմերի և այլն կանոնների խախտման կամ չկատարման հետ:
 - 4.5. Գույքի տեխնիկական անսարքության հետ:
5. Սույն Լրացուցիչ պայմանների համաձայն չեն հատուցվում գույքի վնասը կամ կորուստը.
 - 5.1. Որոնք չեն վերականգնվել նախկինում տեղի ունեցած և ապահովագրական պատահարի բնութագիր ունեցող պատահարից տեղի ունեցած վնասներից, անկախ Ապահովագրողի կողմից դրանք ապահովագրական պատահար ճանաչելու փաստից,
 - 5.2. Որոնց վերականգնումը կամ վերանորոգումը կամ փոխարինումը հնարավոր է տվյալ գույքի վաճառողի և/կամ արտադրող կազմակերպության երաշխիքային պարտավորությունների ներքո:
6. Սույն Լրացուցիչ պայմաններով ապահովագրվող ռիսկերի ներքո ապահովագրական հատուցումը տրամադրվում է Ապահովագրի (Շահառուի) կողմից Ապահովագրողի պահանջով հետևյալ փաստաթղթերի ներկայացման դեպքում.
 - 6.1. Ապահովագրության Կանոնների 13.1 կետով նախատեսված փաստաթղթերը,
 - 6.2. Ապահովագրված գույքի վնասի կամ կորստի պատճառների մասին անկախ փորձագետի եզրակացություն,
 - 6.3. Էլեկտրական հոսանքի տատանման կամ էլեկտրականության անջատման փաստը հավաստող փաստաթուղթ իրավասու էլեկտրամատակարար կազմակերպության կողմից:
Ապահովագրողի որոշմամբ սույն ցուցակը կարող է կրճատվել:
7. Սույն Լրացուցիչ պայմաններով չկարգավորվող բոլոր այլ դեպքերի համար կիրառվում են ապահովագրության Կանոնները:
8. Սույն Լրացուցիչ պայմանների և Կանոնների միջև անհամապատասխանության դեպքում առաջնահերթությունը տրվում է սույն Լրացուցիչ պայմանների: